## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՐԵՐԻ ԱՍՈՅԹՆԵՐԸ

*«Եգիպտոսի հայրերի ասոյթները» (յայտնի է նաեւ «Անապատական հայրերի ասոյթները», իսկ եւրոպական գիտական գրականութեան մէջ՝* Apophthegmata Patrum Aegyptiorum *անուանումներով) վաղ քրիստոնէական հայրաբանական գրականութեան բացառիկ նմոյշ է, ղպտիների հոգեւոր ժառանգութեան կարեւոր մասը: Այն* IV-V *դդ. Եգիպտոսի նշանաւոր ճգնաւորներին եւ վանականներին վերագրուող մօտ մէկ հազար իմաստախօսութիւնների, խրատախօսութիւնների, նրանց կեանքը, կենցաղը, գործունէութիւնն ու մտածելակերպը նկարագրող հակիրճ դրուագների եւ մանրապատումների հաւաքածոյ է: Հարկ է յիշեցնել, որ Եգիպտոսն այն երկիրն է, որտեղ սկիզբ առաւ ինչպէս ճգնակեցութիւնը, այնպէս էլ վանական համայնակեցութիւնը. առաջինի աւանդոյթների սկզբնաւորողն է ճանաչուած Անտոն Մեծը (251-326), երկրորդի՝ Սուրբ Պախումիոսը[1] (292-348):*

*V-VI դարերում՝ մինչ այդ բերանացի փոխանցուող ասոյթները գրի առնուեցին, ապա յունարէն եւ մի շարք այլ լեզուների թարգմանուած՝ լայն տարածում գտան քրիստոնէական աշխարհում: Ղպտերէն տեքստը պարունակող միակ ձեռագիրը պահպանուել է հինգ մասի բաժանուած, որոնք պահւում են Նեապոլի, Փարիզի, Վիեննայի, Վենետիկի եւ Լոնդոնի գրադարաններում: Նեապոլեան՝ ամենածաւալուն հատուածն առաջին անգամ հրատարակուել է 1810 թ. Հռոմում (*G. Zoega, *Catalogue codicum copticorum manu scriptorum qui in Museo Borgiano Velitris adservantur), իսկ միւսները 1960 թ. Գահիրէում (*M. Chaîne, *Le manuscrit de la version copte en dialecte sahidique des Apophthegmata Patrum):*

*Ստորեւ ներկայացնում ենք ղպտերէնից թարգմանուած ասոյթների հատընտիր: Սկզբնամասում զետեղուած կարճ ասոյթներին կցել ենք դրանց ղպտերէն տեքստն ու հայերէն տառադարձութիւնը՝ հետաքրքրուողներին բնագրային տեքստի մասին պատկերացում տալու համար: Թարգմանելիս փորձել ենք ըստ հնարաւորի հաւատարիմ մնալ ղպտերէն տեքստին, ուստի ներողամտութիւն ենք հայցում այդ պատճառով հայերէն թարգմանութեան մէջ տեղ գտած հնարաւոր ոճական եւ շարահիւսական անհարթութիւնների համար:*

**ԱՐՄԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ**
*Բանասիրական գիտութիւնների թեկնածու*

[1] *Ղպտերէն անունը՝ Պահոմ:*

* * *

*Մի ծերունի[2] ասում էր. «Ամէն մի փորձութեան համար մի՛ մեղադրիր ուրիշին, այլ մեղադրի՛ր ինքդ քեզ՝ ասելով, թէ՝ Սա ինձ պատահեց մեղքերիս համար»։*

**ⲁϥϫⲟⲟⲥ ⲛ̄ϭⲓ ⲟⲩϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ϩⲙ̄ ⲡⲓⲣⲁⲥⲙⲟⲥ ⲛⲓⲙ ⲙ̄ⲡⲣ̄ϭⲛ̄-ⲁⲣⲓⲕⲉ ⲉ ⲣⲱⲙⲉ, ⲁⲗⲗⲁ ϭⲛ̄-ⲁⲣⲓⲕⲉ ⲉⲣⲟⲕ ⲙⲁⲩⲁⲁⲕ ⲉⲕϫⲱ ⲙ̄ⲙⲟⲥ ϫⲉ ⲉⲣⲉ-ⲛⲁⲓ ϣⲟⲟⲡ ⲙ̄ⲙⲟⲓ ⲉⲧⲃⲉ ⲛⲁⲛⲟⲃⲉ·**
Աֆճո́ոս ընչի́ [3] ուհըլլո́ ճե հըմ պիրասմո́ս նիմ ըմպըրչըն-արի́քե է ռո́մե, ալլա́ չըն-արի́քե էռո́ք մաուա́աք[4] էկճո́ ըմմո́ս ճե էռե-նայ շո́ոպ ըմմո́յ էտբե նանո́բե։

*Ծերունիներն ասում էին. «Եթէ իսկապէս քեզ հրեշտակ երեւայ, մի՛ թող, որ մօտենայ քեզ, այլ խոնարհաբար ասա. «Արժանի չեմ հրեշտակ տեսնելու, քանզի մեղքերի մէջ եմ ապրել»»։*

**ⲁⲩϫⲟⲟⲥ ⲛ̄ϭⲓ ⲛ̄ϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ⲕⲁⲛ ⲛⲁⲙⲉ ⲉⲣϣⲁⲛ-ⲟⲩⲁⲅⲅⲉⲗⲟⲥ ⲟⲩⲱⲛϩ ⲛⲁⲕ ⲉⲃⲟⲗ, ⲙ̄ⲡⲣ̄ϣⲟⲡϥ̄ ⲉⲣⲟⲕ, ⲁⲗⲗⲁ ⲑⲃ̄ⲃⲓⲟⲕ ⲛⲅ̄ϫⲟⲟⲥ ϫⲉ ⲛ̄ϯⲙ̄ⲡϣⲁ ⲁⲛ ⲉ ⲛⲁⲩ ⲉ ⲡⲁⲅⲅⲉⲗⲟⲥ ⲉ-ⲁⲓⲱⲛϩ̄ ϩⲛ̄ ⲛ̄ⲛⲟⲃⲉ·**
Աուճո́ոս ընչի́ ընհըլլո́ ճե կան նամե́ էռշա́ն-ուա́նգելոս ուո́նահ նակ էբո́լ, ըմպըրշո́պըֆ էռո́կ, ալլա́ թըբբյո́կ նըգճո́ոս ճե ընտիըմպշա́ ան է նա́ու է պա́նգելոս է-այո́նըհ հըն ըննո́բե։

*Երանուհի Սինկլետիկէն ասում էր. «Ինչպէս հնարաւոր չէ նաւն իր ոտքի վրայ կանգնեցնել առանց մեխի, այնպէս էլ հնարաւոր չէ փրկութեան արժանանալ առանց սրտի խոնարհութեան»։*

**ⲁⲥϫⲟⲟⲥ ⲛ̄ϭⲓ ⲧⲙⲁⲕⲁⲣⲓⲁ ⲥⲩⲅⲕⲗⲏⲧⲓⲕⲏ ϫⲉ ⲛ̄ ⲑⲉ ⲉⲧⲉ ⲙⲛ̄ ϭⲟⲙ ⲛ̄ ϫⲟⲓ ⲉ ⲧⲁϩⲟ ⲉⲣⲁⲧϥ̄ ⲁϫⲛ̄ ⲉⲓϥⲧ, ⲧⲁⲓ ⲧⲉ ⲑⲉ ⲟⲩⲁⲧϭⲟⲙ ⲡⲉ ⲟⲩϫⲁⲓ ⲭⲱⲣⲓⲥ ⲡⲉⲑⲃ̄ⲃⲓⲟ ⲛ̄ ϩⲏⲧ·**
Ասճո́ոս ընչի́ տըմակա́րիա սինկլետի́կե ճե ըն թե էտե մըն չոմ ըն ճոյ է տահո́ էռա́տըֆ ա́ճըն իֆտ, տայ տե թե ուատչո́մ պե ուճա́յ քօրի́ս պեթըբբյո́ ըն հետ։

*Մի ծերունու հարցրեցին. «Ինչպէ՞ս է, որ ոմանք ասում են, թէ միշտ հրեշտակների յայտնուելն են տեսնում»։ Ասաց նրանց. «Աւելի երանի նրան, ով ցանկացած պահին իր սեփական մեղքերը կը տեսնի»։*

---

[2] «Ծեռունի» բառը (ղպտերէն ϩⲗ̄ⲗⲟ հըլլո) հիմնականում գործածւում է «տարեց ճգնաւոր» կամ «տարեց վանական» իմաստներով։

[3] Ղպտերէնի ϭ տառն աւանդաբար տառադարձւում է «չ», սակայն իրականում այն աւելի մօտ է եղել փափուկ «ք»-ի՝ *ընքյի*։

[4] Ձայնաւորից առաջ կամ յետոյ «ու» տառը նշում է w հնչիւնը։

**ⲁⲩϫⲛⲉ-ⲟⲩϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ⲛ̄ ⲁϣ ⲛ̄ ϩⲉ ⲟⲩⲛ̄ ϩⲟⲉⲓⲛⲉ ϫⲱ ⲙ̄ⲙⲟⲥ ϫⲉ ϣⲁⲛⲛⲁⲩ ⲉ ⲡϭⲱⲗⲡ̄ ⲉⲃⲟⲗ ⲛ̄ ϩⲉⲛⲁⲅⲅⲉⲗⲟⲥ· ⲡ̄ⲉϫⲁϥ ⲛⲁⲩ ϫⲉ ⲛⲁⲓⲁⲧϥ̄ ⲛ̄ ϩⲟⲩⲟ ⲙ̄ ⲡⲉⲧⲛⲁⲛⲁⲩ ⲉ ⲛⲉϥⲛⲟⲃⲉ ⲙ̄ⲙⲓⲛ ⲙ̄ⲙⲟϥ ⲛ̄ ⲟⲩⲟⲉⲓϣ ⲛⲓⲙ·**

Աուճնե-ուհըլլո՛ ճե ըն աշ ըն հե ուը՛ն հո՛յնե ճո ըմմո՛ս ճե շաննա՛ու է պշո՛լըպ էբո՛լ ըն հենա՛նգելոս: Պեճա՛ֆ նա՛ու ճե նայա՛տըֆ ըն հուո՛ ըմ պետնանա՛ու է նեֆնո՛բէ ըմմի՛ն ըմմո՛ֆ ըն ուո՛յշ նիմ:

*Մի եղբայր[5] հարցրեց ծերունուն, թէ լա՞ւ է արդեօք շատ ապաշխարանք տալ: Ասաց ծերունին. «Նայի՛ր Նաւէի որդի Յեսուին. երբ երեսնիվայր ընկաւ, Աստուած երեւաց նրան»:*

**ⲁⲩⲥⲟⲛ ϫⲛⲉ ⲟⲩ ϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ⲛⲁⲛⲟⲩ ϯ ϩⲁϩ ⲙ̄ ⲙⲉⲧⲁⲛⲟⲓⲁ· ⲡⲉϫⲁϥ ⲛ̄ϭⲓ ⲡϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ⲧⲉⲛⲛⲁⲩ ⲉ ⲓⲏⲥⲟⲩ ⲡϣⲏⲣⲉ ⲛ̄ ⲛⲁⲩⲏ ϫⲉ ⲉⲧⲓ ⲉϥⲡⲁϩⲧ̄ ⲉϫⲙ̄ ⲡⲉϥϩⲟ ⲁ-ⲡⲛⲟⲩⲧⲉ ⲟⲩⲱⲛϩ̄ ⲛⲁϥ ⲉⲃⲟⲗ·**

Աուսո՛ն ճնե ու հըլլո՛ ճե նանո՛ւ տի հահ ըմ մետա՛նոյա: Պեճա՛ֆ ընչի՛ պըհըլլո՛ ճե տեննա՛ու է եսու՛ պըշե՛րե ըն նաուե՛ ճե է՛տի էֆպա՛հըտ է՛ճըմ պեֆհո՛ ա-պընո՛ւտե ուո՛նըհ նաֆ էբո՛լ:

*Մի ճգնաւորի հարցրեցին, թէ ի՞նչ է հեզութիւնը: Ասաց. «Երբ եղբայրդ մեղք գործի քո դէմ եւ դու ներես նրան մինչեւ որ կը զղջայ»:*

**ⲁⲩϫⲛⲉ ⲟⲩϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ⲟⲩ ⲡⲉ ⲡⲉⲑⲃ̄ⲃⲓⲟ· ⲡⲉϫⲁϥ ϫⲉ ⲉⲣϣⲁⲛⲡⲉⲕⲥⲟⲛ ⲣ̄-ⲛⲟⲃⲉ ⲉⲣⲟⲕ ⲡⲉ ⲛ̄ⲅ̄ⲕⲱ ⲛⲁϥ ⲉⲃⲟⲗ ⲙ̄ⲡⲁⲧⲉϥⲙⲉⲧⲁⲛⲟⲓ·**

Աուճնե՛ ուհըլլո՛ ճե ու պե պեթըբբյո՛: Պեճա՛ֆ ճե էռշանպեկսո՛ն ըռ-նո՛բե էռո՛կ պե նըգկո՛ նաֆ էբո՛լ ըմպատեֆմետա՛նոյ:

*Մի եղբայր հարցրեց ծերունուն, թէ ի՞նչ է սրտի հեզութիւնը: Ծերունին նրան պատասխանեց. «Որ պարտադրես քեզ բարով հատուցել նրանց, ովքեր քեզ չարիք են արել»: Ասաց եղբայրը. «Իսկ եթէ մէկն այդ աստիճանի չի հասել՝ ի՞նչ անի»: Պատասխանեց. «Թող իրեն լռութիւն ընտրի»:*

**ⲁⲩⲥⲟⲛ ϫⲛⲉ ⲟⲩϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ⲟⲩ ⲡⲉ ⲡⲉⲑⲃ̄ⲃⲓⲟ ⲛ̄ ϩⲏⲧ· ⲡⲉϫⲉ ⲡϩⲗ̄ⲗⲟ ⲛⲁϥ ϫⲉ ⲉⲧⲣⲉⲕⲣ̄-ⲡⲡⲉⲧⲛⲁⲛⲟⲩϥ ⲡⲉ ⲛ̄ ⲛⲉⲧⲣ̄-ⲡⲉⲑⲟⲟⲩ ⲛⲁⲕ· ⲡⲉϫⲉ ⲡⲥⲟⲛ ⲛⲁϥ ϫⲉ ⲉⲣϣⲁⲛⲧⲙ̄-ⲟⲩⲁ ⲡⲱϩ ⲉ ⲡⲉⲓϣⲓ, ⲟⲩ ⲡⲉⲧⲉϥⲛⲁⲁⲁϥ· ⲡⲉϫⲉ ⲡϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ⲙⲁⲣⲉϥⲥⲱⲧⲡ̄ ⲛⲁϥ ⲙ̄ ⲡⲕⲁⲣⲱϥ·**

Աուսո՛ն ճնե ուհըլլո՛ ճե ու պե պեթըբբյո՛ ըն հետ: Պեճե՛ պըհըլլո՛ նաֆ ճե էտրեկըռ-պըպետնանո՛ւֆ պե ըն նետըռ-պեթո՛ու նակ: Պեճե՛ պըսո՛ն նաֆ ճե էռշանտըմ-ուա՛ պոհ է պեյշի, ու պետեֆնաա՛աֆ: Պեճե՛ պըհըլլո՛ ճե մառեֆսո՛տըպ նաֆ ըմ պըկառո՛ֆ:

[5] խօսքն ամենուրէք հիմնականում միաբան եղբայրների մասին է:

*Ծերունիներից մէկը գնաց մէկ ուրիշի մօտ, եւ սա ասաց իր աշակերտին, թէ՝ Մեզ մի քիչ ոսպ պատրաստի՛,- եւ նա պատրաստեց: Ասաց՝ Մեզ հաց թրջի՛,- եւ նա թրջեց: Նրանք էլ ամբողջ օրն ու ամբողջ գիշերն անցկացրեցին՝ զրուցելով հոգեւորի մասին:*

**ⲁ-ⲟⲩⲁ ⲛ̄ ⲛ̄ϩⲗ̄ⲗⲟ ⲃⲱⲕ ϣⲁ ⲕⲉϩⲗ̄ⲗⲟ ⲁⲩⲱ ⲡⲉϫⲁϥ ⲙ̄ ⲡⲉϥⲙⲁⲑⲏⲧⲏⲥ ϫⲉ ⲧⲁⲙⲓⲟ ⲛⲁⲛ ⲟⲩⲕⲟⲩⲓ ⲛ̄ ⲁⲣϣⲓⲛ ⲁⲩⲱ ⲁϥⲧⲁⲙⲓⲟϥ· ⲡⲉϫⲁϥ ϫⲉ ϩⲉⲣⲡ̄-ϩⲉⲛⲟⲉⲓⲕ ⲛⲁⲛ ⲁⲩⲱ ⲁϥϩⲟⲣⲡⲟⲩ· ⲛ̄ⲧⲟⲟⲩ ⲇⲉ ⲁⲩⲙⲟⲩⲛ ⲉⲃⲟⲗ ⲉⲩϣⲁϫⲉ ⲉ ⲛⲉⲡⲛⲉⲩⲙⲁⲧⲓⲕⲟⲛ ⲙ̄ ⲡⲉϩⲟⲟⲩ ⲧⲏⲣϥ̄ ⲙⲛ̄ ⲧⲉⲩϣⲏ ⲧⲏⲣⲥ̄·**

Ա-ուա́ ըն ընհըլլո́ բոկ շա կեհըլլո́ աուո́ պեճա́ֆ ըմ պեֆմաթետե́ս ճե տամյո́ նան ուկուի́ ըն առշի́ն, աուո́ աֆտամյո́ֆ: Պեճա́ֆ ճե հե́րպ-հենո́յկ նան, աուո́ աֆհո́րպու: Ընտո́ու դե աումո́ւն էբո́լ էուշա́ճե է նեպնեումատիկո́ն ըմ պեհո́ու տե́րֆ մըն տեուշե́ տե́րս:

*Ասում էր ապա[6] Յովսէփը. «Երբ նստած էինք ապա Պոյմէնի հետ, նա յիշատակեց ապա Ագաթոնին, եւ մենք ասացինք. «Նա պատանի է, ինչո՞ւ ես «ապա» կոչում»: Եւ ապա Պոյմէնն ասաց. «Նրա շուրթերն[7] են ստիպում, որ «ապա» կոչես»:*

**ⲁϥϫⲟⲟⲥ ⲛ̄ϭⲓ ⲁⲡⲁ ⲓⲱⲥⲏϥ ϫⲉ ⲉⲛϩⲙⲟⲟⲥ ⲙⲛ̄ ⲁⲡⲁ ⲡⲟⲓⲙⲏⲛ ⲁϥⲁⲛⲟⲙⲁⲍⲉ ⲛ̄ ⲁⲡⲁ ⲁⲅⲁⲑⲟⲛ ⲁⲩⲱ ⲛⲉⲛϫⲱ ⲙ̄ⲙⲟⲥ ⲛⲁϥ ϫⲉ ⲟⲩⲃⲣ̄ⲣⲉ ⲡⲉ ⲁⲩⲱ ⲉⲧⲃⲉ ⲟⲩ ⲕⲙⲟⲩⲧⲉ ⲉⲣⲟϥ ϫⲉ ⲁⲡⲁ· ⲁⲩⲱ ⲡⲉϫⲁϥ ⲛ̄ϭⲓ ⲁⲡⲁ ⲡⲟⲓⲙⲏⲛ ϫⲉ ⲧⲉϥⲧⲁⲡⲣⲟ ⲧⲛ̄ⲧⲁⲥⲧⲣⲉⲩ-ⲙⲟⲩⲧⲉ ⲉⲣⲟϥ ϫⲉ ⲁⲡⲁ·**

Աֆճո́ոս ընչի́ ա́պա յոսե́ֆ ճե էնհմո́ոս մըն ա́պա պոյմե́ն աֆանո́մազե ըն ա́պա ագաթո́ն աուո́ նենճո́ ըմմո́ս նաֆ ճե ուբը́րռե պե աուո́ էտբե ու կընամո́ւտե էռո́ֆ ճե ա́պա: Աուո́ պեճա́ֆ ընչի́ ա́պա պոյմե́ն ճե տեֆտապրո́ տընտաստրեու-մո́ւտե էռո́ֆ ճե ա́պա:

*Սատանան լուսոյ հրեշտակի տեսք ընդունեց եւ երեւաց եղբայրներից մէկին՝ ասելով. «Ես Գաբրիէլն եմ, ում քեզ մօտ են ուղարկել»: Եւ սա ասաց. «Տե՛ս, թերեւս քեզ մէկ այլ եղբօր մօտ են ուղարկել, քանզի ես անարժան եմ»: Եւ սատանան անմիջապէս անհետացաւ:*

**ⲁ-ⲡⲇⲓⲁⲃⲟⲗⲟⲥ ϣⲃ̄ⲧϥ̄ ϩⲛ̄ ⲟⲩⲥⲭⲩⲙⲁ ⲛ̄ ⲁⲅⲅⲉⲗⲟⲥ ⲙ̄ ⲡⲟⲩⲉⲓⲛ ⲁϥⲟⲩⲱⲛϩ̄ ⲉ ⲟⲩⲁ ⲛ̄ ⲛⲉⲥⲛⲏⲩ ⲁⲩⲱ ⲡⲉϫⲁϥ ⲛⲁϥ ϫⲉ ⲁⲛⲅ̄ ⲡⲉ ⲅⲁⲃⲣⲓⲏⲗ ⲛ̄ⲧⲁⲩⲧⲛ̄ⲛⲟⲟⲩⲧ ϣⲁⲣⲟⲕ· ⲡ̄ⲉϫⲁϥ ⲛⲁϥ ϫⲉ ⲁⲛⲁⲩ ⲛ̄ⲧⲁⲩⲧⲛ̄ⲛⲟⲟⲩⲕ ϣⲁ ⲕⲉⲟⲩⲁ ⲛ̄ ⲛⲉⲥⲛⲏⲩ, ⲁⲛⲟⲕ ⲅⲁⲣ ⲛ̄ϯⲙ̄ⲡϣⲁ ⲁⲛ· ⲛ̄ⲧⲟϥ ⲇⲉ ⲛ̄ ⲧⲉⲩⲛⲟⲩ ⲁϥⲣ̄-ⲁⲧⲟⲩⲱⲛϩ̄ ⲉⲃⲟⲗ·**

Ա-պըդիա́բոլոս շը́բտըֆ հըն ուսքի́մա ըն ա́նգելոս ըմ պըուո́յն աֆուո́նըհ է ուա́ ըն նեսնե́ու աուո́ պեճա́ֆ նաֆ ճե ա́նըգ պե գաբրիե́լ ընտաուտըննո́ուտ շառո́կ: Պեճա́ֆ

---

[6] Հայր (արամեերէն אַבָּא աբբա բառից):

[7] Այսինքն՝ ասածները:

նաֆ նե անա́ու ընտաուտըննո́ուկ շա կեուա́ ըն նեսնե́ու, անո́կ գառ ընտիըմպըշա́
ան: Ընտո́ֆ դե ըն տեունո́ւ աֆըռ-ատուո́նըճ էբո́լ:

*Մեր հայրերից մէկն ուղարկեց իր աշակերտին ջուր բերելու: Ջրհորն էլ շատ հեռու էր խցից, իսկ աշակերտը մոռացաւ հետը պարան վերցնել: Երբ ջրհորին հասաւ, հասկացաւ, որ հետը պարան չի բերել: Աղօթք արեց, բացականչեց՝ ասելով. «Ջրհո՛ր, հայրս է ասել, որ այս կուժը ջրով լցնեմ»: Եւ իսկոյն ջուրը վերեւ բարձրացաւ, եղբայրը լցրեց իր կուժը, եւ ջուրը կրկին վերադարձաւ իր տեղը:*

**ⲁ-ⲟⲩⲁ ⲛ̄ ⲛⲉⲛⲉⲓⲟⲧⲉ ⲧⲛ̄ⲛⲟⲟⲩ ⲛ̄ ⲛⲉϥⲙⲁⲑⲏⲧⲏⲥ ⲉ ⲙⲉϩ-ⲙⲟⲟⲩ· ⲛⲉⲣⲉ-ⲧϣⲱⲧⲉ ⲇⲉ ⲡⲉ ⲟⲩⲏⲩ ⲛ̄ ⲧⲣⲓ ⲙ̄ⲙⲁⲧⲉ· ⲁϥⲣ̄-ⲡⲱⲃϣ̄ ⲇⲉ ⲉ ϫⲓ-ⲡⲛⲟⲩϩ ⲛ̄ⲙ̄ⲙⲁϥ· ⲛ̄ⲧⲉⲣⲉϥⲉⲓ ⲇⲉ ⲉϫⲛ̄ ⲧϣⲱⲧⲉ, ⲁϥⲉⲓⲙⲉ ϫⲉ ⲙ̄ⲡⲉϥⲉⲓⲛⲉ ⲛ̄ⲙ̄ⲙⲁϥ ⲙ̄ ⲡⲛⲟⲩϩ· ⲁϥⲉⲓⲣⲉ ⲛ̄ ⲟⲩϣⲗⲏⲗ, ⲁϥⲙⲟⲩⲧⲉ ⲉϥϫⲱ ⲙ̄ⲙⲟⲥ ϫⲉ ⲡϣⲏⲓ, ⲡⲁⲉⲓⲱⲧ ⲡⲉⲧ ϫⲱ ⲙ̄ⲙⲟⲥ ϫⲉ ⲙⲟⲩϩ ⲙ̄ ⲡⲁⲅⲅⲓⲟⲛ ⲙ̄ ⲙⲟⲟⲩ· ⲁⲩⲱ ⲛ̄ ⲧⲉⲩⲛⲟⲩ ⲁ-ⲡⲙⲟⲟⲩ ⲉⲓ ⲉ ⲡϣⲱⲓ, ⲁ-ⲡⲥⲟⲛ ⲙⲟⲩϩ ⲙ̄ ⲡⲉϥϣⲟϣⲟⲩ ⲁⲩⲱ ⲁ-ⲡⲙⲟⲟⲩ ϩⲙⲟⲟⲥ ⲟⲛ ⲉ ⲡⲉϥⲙⲁ·**

Ա-ուա́ ըն նենյո́տե տըննո́ու ըն նեֆմաթետե́ս է մեհ-մո́ու: Ներե-տըշո́տե դե պե ուե́ու ըն տըրի́ ըմմա́տե: Աֆըռ-պո́բըշ դե է ճի-պընո́ւհ նըմմա́ֆ: Ընտերեֆի́ դե է́ճըն տըշո́տե, աֆի́մե նե ըմպեֆի́նե նըմմա́ֆ ըմ պընուհ: Աֆի́ռե ըն ուշլե́լ, աֆմո́ւտե էֆճո́ ըմմո́ս նե պըշե́յ, պայո́տ պետ ճո ըմմո́ս նե մուհ ըմ պանգիո́ն ըմ մո́ու: Աուո́ ըն տեունո́ւ ապըմո́ու ի է պըշոյ, ա-պըսոն մուհ ըմ պեֆշոշո́ւ աուո́ ա-պըմո́ու հմո́ս օն է պեֆմա́:

*Եգիպտոսում կար մէկը, որ անդամալոյծ որդի ունէր: Նա բերեց որդուն աբբա Մակարիոսի խցի մօտ, լաց լինելով թողեց դրան մօտ եւ հեռացաւ: Ծգնաւորն էլ դուրս նայելով՝ տեսաւ լաց լինող փոքր տղային եւ հարցրեց. «Ո՞վ բերեց քեզ այստեղ»: Նա էլ ասաց. «Հայրս: Բերեց, թողեց եւ գնաց»: Ծերունին ասաց նրան. «Վե՛ր կաց, գնա՛ եւ հասի՛ր նրան»: Եւ նոյն պահին տղան կազդուրուեց, վեր կացաւ, հասաւ հօրը եւ նրանք ուրախութեամբ վերադարձան իրենց տունը:*

**ⲛⲉ-ⲟⲩⲛ̄ ⲟⲩⲁ ϩⲛ̄ ⲕⲏⲙⲉ ⲉ ⲟⲩⲛ̄ⲧⲁϥ ⲙ̄ⲙⲁⲩ ⲛ̄ ⲟⲩϣⲏⲣⲉ ⲉϥⲥⲏϭ· ⲁⲩⲱ ⲁϥⲉⲓⲛⲉ ⲙ̄ⲙⲟϥ, ⲁϥⲕⲁⲁϥ ϩⲛ̄ ⲧⲣⲓ ⲛ̄ ⲁⲡⲁ ⲙⲁⲕⲁⲣⲓⲟⲥ ⲁⲩⲱ ⲁϥⲕⲁⲁϥ ⲉϥⲣⲓⲙⲉ ϩⲁϩⲧⲙ̄ ⲡⲣⲟ ⲁϥⲃⲱⲕ ⲉ ⲡⲟⲩⲉ· ⲡϩⲗ̄ⲗⲟ ⲇⲉ ⲁϥϭⲱϣ̄ⲧ ⲉⲃⲟⲗ, ⲁϥⲛⲁⲩ ⲉ ⲡⲕⲟⲩⲓ ⲛ̄ ϣⲏⲣⲉ ⲉϥⲣⲓⲙⲉ ⲁⲩⲱ ⲡⲉϫⲁϥ ⲛⲁϥ ϫⲉ ⲛⲓⲙ ⲡⲉⲛⲧⲁϥⲛ̄ⲧⲕ̄ ⲉ ⲡⲉⲓⲙⲁ· ⲛ̄ⲧⲟϥ ⲇⲉ ⲡⲉϫⲁϥ ϫⲉ ⲡⲁⲉⲓⲱⲧ ⲡⲉ· ⲁϥⲛ̄ⲧ, ⲁϥⲛⲟϫⲧ̄ ⲉⲃⲟⲗ, ⲁϥⲃⲱⲕ· ⲡⲉϫⲉ-ⲡϩⲗ̄ⲗⲟ ⲛⲁϥ ϫⲉ ⲧⲱⲟⲩⲛⲅ̄ ⲛⲅ̄ⲡⲱⲧ ⲛⲅ̄ⲧⲁϩⲟϥ· ⲁⲩⲱ ⲛ̄ ⲧⲉⲩⲛⲟⲩ ⲁϥⲟⲩϫⲁⲓ, ⲁϥⲧⲱⲟⲩⲛ, ⲁϥⲧⲁϩⲉ-ⲡⲉϥⲉⲓⲱⲧ ⲁⲩⲱ ⲛ̄ ⲧⲉⲓϩⲉ ⲁⲩⲃⲱⲕ ⲉ ⲡⲉⲩⲏⲓ ⲉⲩⲣⲁϣⲉ·**

Նե-ուը́ն ուա́ հըն կե́մե է ուընտա́ֆ ըմմա́ու ըն ուշե́րե էֆսե́չ: Աուո́ աֆինե́ ըմմո́ֆ աֆկա́աֆ հըն տըրի́ ըն ա́պա մակա́րիոս աուո́ աֆկա́աֆ էֆրի́մե հա́հտըմ պըրո́ աֆբո́կ է պըուե́: Պըհըլլո́ դե աֆչո́շըտ էբո́լ աֆնա́ու է պըկուի́ ըն շե́րե էֆրի́մե աուո́ պեճա́ֆ նաֆ նե նիմ պենտաֆը́նտըկ է պեյմա́: Ընտո́ֆ դե պեճա́ֆ նե պայո́տ պե: Աֆը́նտ աֆնո́ճըտ էբոլ աֆբո́կ: Պեճե-պըհըլլո́ նաֆ նե տո́ունըգ նըգպո́տ նըգտահո́ֆ:

Աուտ́ ըն տեուննու́ աֆտո́ռուն աֆտահե-պեֆյո́տ աուտ́ ըն տեյհե́ աուբո́կ է պեուէ́յ էուրա́շե։

*Ասում էր ապա Յովհաննէսը, որին աքսորել էր Մարկիանոսը. «Մի անգամ Սիրիայից եկանք ապա Պոյմէնի մօտ եւ ուզեցինք հարցնել նրան խստասրտութեան մասին։ Ծերունին սակայն յունարէն չգիտէր, թարգմանիչ էլ չկար։ Բայց տեսնելով, որ մենք սրտնեղած ենք՝ սկսեց յունարէն խօսել։*

ⲁϥϫⲟⲟⲥ ⲛ̄ϭⲓ ⲁⲡⲁ ⲓⲱϩⲁⲛⲛⲏⲥ ⲡⲉⲛⲧⲁⲩⲉⲝⲱⲣⲓⲍⲉ ⲙ̄ⲙⲟϥ ϩⲓⲧⲛ̄ ⲙⲁⲣⲕⲓⲁⲛⲟⲥ ϫⲉ ⲁⲛⲉⲓ ⲛ̄ⲟⲩⲉⲓϣ ϣⲁ ⲁⲡⲁ ⲡⲟⲓⲙⲏⲙ ⲉⲃⲟⲗ ϩⲛ̄ ⲧⲥⲩⲣⲓⲁ ⲁⲩⲱ ⲉ-ⲛⲉⲛⲟⲩⲱϣ ⲉ ϫⲛⲟⲩϥ ⲉⲧⲃⲉ ⲧⲙⲛ̄ⲧⲛⲁϣⲧϩⲏⲧ· ⲡϩⲗ̄ⲗ̄ⲟ ⲇⲉ ⲛⲉϥⲥⲟⲟⲩⲛ ⲁⲛ ⲡⲉ ⲙ̄ ⲙⲛ̄ⲧⲟⲩⲉⲉⲓⲉⲛⲓⲛ ⲁⲩⲟ ⲛⲉⲙⲛ̄ ϩⲉⲣⲙⲉⲛⲉⲩⲧⲏⲥ ⲙ̄ⲙⲁⲩ ⲁⲛ ⲡⲉ· ⲡϩⲗ̄ⲗ̄ⲟ ⲇⲉ ⲁϥⲛⲁⲩ ⲉⲣⲟⲛ ⲉⲛⲑⲗⲓⲃⲉ ⲁϥⲁⲣⲭⲉⲓ ⲛ̄ ϣⲁϫⲉ ⲙ̄ ⲙⲛ̄ⲧⲟⲩⲉⲉⲓⲉⲛⲓⲛ·

Աֆճո́ոս ընչի́ ա́պա յոհաննե́ս պենտաուէխսո́րիզէ ըմմո́ֆ հի́տըն մարկիա́նոս ճե անի́ ընուո́յշ շա ա́պա Պոյմե́ն էբո́լ հըն տըսի́րիա աուտ́ է-նեննուո́շ է ճնուֆ էտբե տըմընտնաշտըհե́տ։ Պըհըլլո́ դե նեֆսո́ուն ան պե ըմ մընտուեյենի́ն աուտ́ նեմըն́ հերմենեուտե́ս ըմմա́ու ան պե։ Պըհըլլո́ դե աֆնա́ու էռո́ն էնթլի́բե աֆա́րճի ըն շա́ճե ըմ մընտուեյենի́ն։

*Մի ծերունի կար, ով ճգնակեաց կեանք էր վարում Յորդանանի բարձունքին։ Մի շոգ օր նա քարանձաւ մտաւ եւ այնտեղ առիւծ գտաւ, որն սկսեց կրճտացնել իր ատամներն ու մռնչալ։ Ծերունին ասաց. «Ինչո՞ւ ես դժգոհում։ Այս տեղը կ՚ընդունի ե՛ւ ինձ ե՛ւ քեզ։ Իսկ եթէ չես ուզում ինձ հետ մնալ՝ վե՛ր կաց եւ հեռացի՛ր»։ Առիւծն էլ չդիմացաւ նրան եւ հեռացաւ։*

ⲉ-ⲛⲉⲟⲩⲛ̄ ⲟⲩϩⲗ̄ⲗ̄ⲟ ⲉϥⲟⲩⲉϩ ϩⲓϫⲙ̄ ⲡⲓⲟⲣⲇⲁⲛⲏⲥ ⲉϥⲁⲛⲁⲭⲟⲣⲉⲓ· ⲁⲩⲱ ⲁϥⲃⲱⲕ ⲉϩⲟⲩⲛ ⲉⲩⲥⲡⲏⲗⲁⲓⲟⲛ ϩⲙ̄ ⲡⲕⲁⲩⲙⲁ ⲁⲩⲱ ⲁϥϭⲓⲛⲉ ⲛ̄ ⲟⲩⲙⲟⲩⲓ ϩⲙ̄ ⲡⲙⲁ ⲉⲧ ⲙ̄ⲙⲁⲩ· ⲁⲩⲱ ⲁϥⲁⲣⲭⲉⲓ ⲛ̄ ϩⲣⲟϫⲣϫ̄ ⲛ̄ ⲛⲉϥⲟⲃϩⲉ ⲉϩⲟⲩⲛ ⲉⲣⲟϥ ⲁⲩⲱ ⲁϥⲉⲗϩⲏⲙ· ⲡⲉϫⲉ ⲡϩⲗ̄ⲗ̄ⲟ ⲛⲁϥ ϫⲉ ⲉⲧⲃⲉ ⲟⲩ ⲕϩⲏϣ, ⲟⲩⲛ̄ ⲙⲁ ⲙ̄ⲙⲁⲩ ⲛ̄ϥϣⲟⲡⲧ̄ ⲁⲩⲱ ⲛ̄ϥϣⲟⲡⲕ̄ ⲟⲛ· ⲉϣⲟⲡⲉ ⲇⲉ ⲛ̄ⲕⲟⲩⲱϣ ⲁⲛ ⲉ ⲟⲩⲱϩ ⲛⲙ̄ⲙⲁⲓ ⲧⲱⲟⲩⲛ ⲛⲅ̄ⲃⲱⲕ ⲉⲃⲟⲗ· ⲡⲓⲙⲟⲩⲓ ⲇⲉ ⲙ̄ⲡⲉϥϥⲓ ⲉⲣⲟϥ ⲁϥⲉⲓ ⲉⲃⲟⲗ·

Է-նեուըն́ ուհըլլո́ էֆուե́հ հի́ճըմ պըյորդանե́ս էֆանախո́րի։ Աուտ́ աֆբո́կ էհո́ւն էուսպե́լեոն հըմ պըկա́ումա աուտ́ աֆչի́նե ըն ումուի́ հըմ պըմա էտըմմա́ու։ Աուտ́ աֆա́րճի ըն հրո́ճրըճ ըն նեֆո́բհե աուտ́ աֆելհե́մ։ Պեճե́ պըհըլլո́ նաֆ ճե էտբե ու կըհե́շ, ուըն́ մա ըմմա́ու նըֆշո́պըտ աուտ́ նեֆշո́պըկ օն։ էշո́պե դե ընկըուո́շ ան է ուո́հ նըմմա́յ տո́ուն նըգբո́կ էբո́լ։ Պիմուի́ դե ըմպեֆֆի́ էռո́ֆ աֆի́ էբո́լ։

*Ոմն եղբայր հարցրեց ծերունուն. «Հա՛յր իմ, ինչո՞ւ է սիրտս բիրտացել եւ չի վախենում Աստծուց»։ Ծերունին պատասխանեց նրան. «Կարծում եմ, որ եթէ մարդ իր սրտում պարսաւանք պահի ինքն իրեն, նա Աստծու վախ ձեռք կը բերի»։ Հարցրեց եղբայրը. «Ի՞նչ է պարսաւանքը»։ Ասաց ծերունին. «Որ մարդ ամէն ինչում կշտամբի իր հո-*

*գին՝ ասելով նրան, թէ՝ Յիշի՛ր, որ մենք պէտք է Աստծու առաջ կանգնենք,- եւ նաեւ ասելով, թէ՝ Ի՞նչ ունեմ մարդկանց հետ։ Եթէ մարդ անի այդ ամէնը, Աստծու վախը կը գայ իրեն»։*

**ⲁ-ⲟⲩⲥⲟⲛ ϫⲛⲉ-ⲟⲩϩⲗ̅ⲗⲟ ϫⲉ ⲡⲁⲉⲓⲱⲧ ⲉⲧⲃⲉ ⲟⲩ ⲁⲛⲟⲕ ⲡⲁϩⲏⲧ ⲛⲁϣ̅ⲧ ⲛ̅ϥⲣ̅-ϩⲟⲧⲉ ⲁⲛ ⲛ̅ϩⲏⲧϥ̅ ⲙ̅ ⲡⲛⲟⲩⲧⲉ· ⲡⲉϫⲉ-ⲡϩⲗ̅ⲗⲟ ⲛⲁϥ ϫⲉ ϯⲙⲉⲉⲩⲉ ϫⲉ ⲉⲣϣⲁⲛ-ⲡⲣⲱⲙⲉ ⲁⲙⲁϩⲧⲉ ⲙ̅ ⲡⲉϫⲡⲓⲟ ϩⲙ̅ ⲡⲉϥϩⲏⲧ ϥⲛⲁϫⲡⲟ ⲛⲁϥ ⲛ̅ ⲑⲟⲧⲉ ⲙ̅ ⲡⲛⲟⲩⲧⲉ· ⲡⲉϫⲉ-ⲡⲥⲟⲛ ⲛⲁϥ ϫⲉ ⲟⲩ ⲡⲉ ⲡⲉϫⲡⲓⲟ· ⲡⲉϫⲉ-ⲡϩⲗ̅ⲗⲟ ϫⲉⲕⲁⲥ ⲉⲣⲉ-ⲡⲣⲱⲙⲉ ⲛⲁϫⲡⲓⲉ-ⲧⲉϥⲯⲩⲭⲏ ϩⲛ̅ ϩⲱⲃ ⲛⲓⲙ ⲉϥϫⲱ ⲙ̅ⲙⲟⲥ ⲛⲁⲥ ϫⲉ ⲁⲣⲓ-ⲡⲙⲉⲉⲩⲉ ϫⲉ ϩⲁⲡⲥ̅ ⲉⲣⲟⲛ ⲡⲉ ⲉⲧⲣⲉⲛⲁⲡⲁⲛⲧⲁ ⲉ ⲡⲛⲟⲩⲧⲉ ⲛ̅ϥϫⲟⲟⲥ ⲟⲛ ϫⲉ ⲁϩⲣⲟⲓ ⲁⲛⲟⲕ ⲙⲛ̅ ⲣⲱⲙⲉ· ⲉⲣϣⲁⲛ-ⲟⲩⲁ ⲇⲉ ⲙⲟⲩⲛ ⲉⲃⲟⲗ ϩⲛ̅ ⲛⲁⲓ ⲥⲛⲏⲩ ⲛⲁϥ ⲛ̅ϭⲓ ⲑⲟⲧⲉ ⲙ̅ ⲡⲛⲟⲩⲧⲉ·**

Ա-ուսո՛ն ճնե-ուհըլլո՛ ճե պայո՛տ էտբե ու անո՛կ պահե՛տ նա՛շըտ նըֆըռ-հո՛տե ան ընհե՛տըֆ ըմ պընո՛ւտե: Պեճե-պըհըլլո՛ նաֆ ճե տիմե՛էուե ճե էռշան-պըռո՛մե ամա՛հտե ըմ պեճըպյո՛ հըմ պեֆհե՛տ ֆնաճըպո՛ նաֆ ըն թո՛տե ըմ պընո՛ւտե: Պեճե-պըսո՛ն նաֆ ճե ու պե պեճըպյո՛: Պեճե-պըհըլլո՛ ճեկա՛ս էռե-պըռո՛մե նաճըպյե՛-տեֆփսիխե՛ հըն հոբ նիմ էֆճո՛ ըմմո՛ս նաս ճե առի-պըմե՛էուե ճե հա՛պըս էռո՛ն պե էտռենա՛պանտա է պընո՛ւտե նըֆճո՛ոս օն ճե ահռո՛յ անո՛կ մըն ռո՛մե: էռշան-ուա՛ դե մուն էբո՛լ հըն նայ սնե՛ու նաֆ ընչի՛ թո՛տե ըմ պընո՛ւտե:

*Ասում էր ապա Պոյմէնը. «Մի եղբայր հարցրեց ապա Պաեսէին. «Ի՞նչ անեմ իմ սրտի հետ, քանզի այն անզգայ է դարձել, եւ ես Աստծուց չեմ վախենում»։ Նա էլ ասաց. «Գնա՛, ընկերակցի՛ր աստուածավախ եղբօրը եւ նրա վախի շնորհիւ դու էլ կը վախենաս Աստծուց»»։*

**ⲁϥϫⲟⲟⲥ ⲛ̅ϭⲓ ⲁⲡⲁ ⲡⲟⲓⲙⲏⲛ ϫⲉ ⲁ-ⲟⲩⲥⲟⲛ ϫⲟⲟⲥ ⲛ̅ ⲁⲡⲁ ⲡⲁⲏⲥⲉ ϫⲉ ⲉⲓⲛⲁⲣ̅-ⲟⲩ ⲙ̅ ⲡⲁϩⲏⲧ ⲉϥⲛⲁϣ̅ⲧ̅ ⲛ̅ϯⲣ̅-ϩⲟⲧⲉ ⲁⲛ ⲛ̅ϩⲏⲧϥ̅ ⲙ̅ ⲡⲛⲟⲩⲧⲉ· ⲡⲉϫⲁϥ ⲛⲁϥ ϫⲉ ⲃⲱⲕ ⲛ̅ⲅ̅ⲧⲟϭⲕ̅ ⲉⲩⲥⲟⲛ ⲉϥⲣ̅-ϩⲟⲧⲉ ⲙ̅ ⲡⲛⲟⲩⲧⲉ ⲁⲩⲱ ⲉⲃⲟⲗ ϩⲛ̅ ⲧⲙⲛ̅ⲧⲣⲉϥⲣ̅ϩⲟⲧⲉ ⲙ̅ ⲡⲉⲧ ⲙ̅ⲙⲁⲩ ⲕⲛⲁⲣ̅-ϩⲟⲧⲉ ϩⲱⲱⲕ ⲛ̅ϩⲏⲧϥ̅ ⲙ̅ ⲡⲛⲟⲩⲧⲉ·**

Աֆճո՛ոս ընչի՛ ա՛պա Պոյմե՛ն ճե ա-ուսո՛ն ճո՛ոս ըն ա՛պա Պաէսե ճե էյնարը-ու՛ ըմ պահե՛տ էֆնա՛շըտ ընտիրը-հո՛տե ան ընհե՛տըֆ ըմ պընո՛ւտե: Պեճա՛ֆ նաֆ ճե բոկ նըգտո՛շըկ էուսո՛ն էֆըռ-հո՛տե ըմ պընո՛ւտե աուո՛ էբո՛լ հըն տըմընտռէֆըռհո՛տե ըմ պետ ըմմա՛ու կնարը-հո՛տե հո՛ոկ ընհե՛տըֆ ըմ պընո՛ւտե:

*Ապա Բանէն հարցրեց մի անգամ ապա Աբրահամին. «Դրախտում Ադամի նման մէկը կարիք ունի՞, որ իրեն երբեմն խորհուրդ տան»։ Եւ նա պատասխանեց. «Այո, Բանէ։ Եթէ Ադամը խորհուրդ խնդրեր հրեշտակներից՝ ուտի՞ արդեօք ծառից, նրանք կասէին, թէ՝ Ո՛չ»։*

**ⲁ-ⲁⲡⲁ ⲃⲁⲛⲉ ⲇⲉ ϫⲛⲉ ⲁⲡⲁ ⲁⲃⲣⲁϩⲁⲙ ⲛ̄ ⲟⲩϩⲟⲟⲩ ⲉϥϫⲱ ⲙ̄ⲙⲟⲥ ϫⲉ ⲟⲩⲣⲱⲙⲉ ⲛ̄ⲧⲁϥⲣ̄ ⲑⲉ ⲛ̄ ⲁⲇⲁⲙ ϩⲙ̄ ⲡⲡⲁⲣⲁⲇⲓⲥⲟⲥ ϥⲣ̄ ⲭⲣⲓⲁ ⲛ̄ ⲕⲉⲥⲟⲡ ⲉⲧⲣⲉⲩϫⲓ ϣⲟϫⲛⲉ ⲛⲁϥ· ⲛ̄ⲧⲟϥ ⲇⲉ ⲡⲉϫⲁϥ ⲛⲁϥ ϫⲉ ⲥⲉ ⲃⲁⲛⲉ· ⲉⲛⲉⲛⲧⲁ ⲁⲇⲁⲙ ⲅⲁⲣ ϫⲓ ϣⲟϫⲛⲉ ⲙⲛ̄ ⲛ̄ⲁⲅⲅⲉⲗⲟⲥ ϫⲉ ⲉⲛⲉ ⲧⲁⲟⲩⲱⲙ ⲉⲃⲟⲗ ϩⲙ̄ ⲡϣⲏⲛ ⲛⲉⲩⲛⲁϫⲟⲟⲥ ⲛⲁϥ ⲡⲉ ϫⲙ̄ⲙⲟⲛ·**

Ա-ա՛պա Բա՛նե դե ճնե ա՛պա Աբրահա՛մ ըն ուհո՛ու էֆճո՛ ըմմո՛ս ճե ուռո՛մե ընտաֆը՛ր թե ըն Ադա՛մ հըմ պըպարա՛դիսոս ֆըռ Քրի՛ա ըն կեսո՛պ էտրեուճի՛ շո՛ճնե նաֆ: Ընտո՛ֆ դե պեճա՛ֆ նաֆ ճե սե Բա՛նե: Էնե՛նտա Ադա՛մ գառ ճի շո՛ճնե մըն ընա՛նգելոս ճե էնե տաուո՛մ էբո՛լ հըմ պըշե՛ն նեունաճո՛ոս նաֆ ճըմմո՛ն:

*Մի անգամ Թեբէի կողմերում մի քանիսը եկան ծերունու մօտ, որ նա բժշկի իրենց հետ եղած դիւահարին: Ծերունին էլ, երբ շատ խնդրեցին նրան, ասաց դեւին. «Դո՛ւրս եկ Աստծու այս էակից»: Դեւն ասաց. «Դուրս կը գամ, միայն թէ մի բան քեզ հարցնեմ՝ ովքե՞ր են այծերն ու ովքե՞ր են գառները»: Ծերունին ասաց. «Այծերը ես եմ, իսկ թէ ովքեր են գառները՝ դա Աստուած գիտի»: Երբ դեւը լսեց դա, ասաց. «Հէնց սրտիդ հեզութեան համար եմ հեռանում»:*

**ⲁ-ϩⲟⲉⲓⲛⲉ ⲉⲓ ⲛ̄ ⲟⲩⲉⲓϣ ϩⲛ̄ ⲑⲏⲃⲁⲓⲥ ϣⲁ ⲟⲩϩⲗ̄ⲗⲟ ⲉⲩⲛ̄ⲧⲁⲩ ⲛ̄ ⲟⲩⲁ ⲉϥⲟ ⲛ̄ ⲇⲁⲓⲙⲱⲛⲓⲟⲛ ϫⲉⲕⲁⲥ ⲉϥⲉⲧⲁⲗϭⲟϥ· ⲡϩⲗ̄ⲗⲟ ⲇⲉ ⲛ̄ⲧⲉⲣⲟⲩ-ⲕⲱⲣϣ̄ ⲙ̄ⲙⲟϥ ⲙ̄ⲙⲁⲧⲉ ⲡⲉϫⲁϥ ⲙ̄ ⲡⲇⲁⲓⲙⲱⲛ ϫⲉ ⲁⲙⲟⲩ ⲉⲃⲟⲗ ϩⲙ̄ ⲡⲉⲡⲗⲁⲥⲙⲁ ⲙ̄ ⲡⲛⲟⲩⲧⲉ· ⲡⲉϫⲉ ⲡⲇⲁⲓⲙⲱⲛ ⲙ̄ ⲡϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ϯⲛⲏⲩ ⲉⲃⲟⲗ, ϯⲛⲁϫⲛⲟⲩⲕ ⲇⲉ ⲉⲩϣⲁϫⲉ ⲛ̄ ⲟⲩⲱⲧ· ⲛⲓⲙ ⲛⲉ ⲛ̄ⲃⲁⲁⲙⲡⲉ ⲁⲩⲟ ⲛⲓⲙ ⲛⲉ ⲛ̄ⲉⲥⲟⲟⲩ· ⲡⲉϫⲉ ⲡϩⲗ̄ⲗⲟ ϫⲉ ⲛ̄ⲃⲁⲁⲙⲡⲉ ⲙⲉⲛ ⲁⲛⲟⲕ ⲡⲉ, ⲛ̄ⲉⲥⲟⲟⲩ ⲇⲉ ⲡⲛⲟⲩⲧⲉ ⲡⲉⲧ ⲥⲟⲟⲩⲛ̄ ⲙ̄ⲙⲟⲟⲩ· ⲛ̄ⲧⲉⲣⲉ-ⲡⲇⲁⲓⲙⲱⲛ ⲥⲱⲧⲙ̄ ⲉ ⲛⲁⲓ ⲡⲉϫⲁϥ ϫⲉ ⲉⲓⲥ ϩⲏⲏⲧⲉ ⲉⲧⲃⲉ ⲡⲉⲕⲑⲃ̄ⲃⲓⲟ ⲛ̄ ϩⲏⲧ ϯⲛⲏⲩ ⲉⲃⲟⲗ·**

Ահո՛յնե ի ըն ուե՛յշ հըն թեբաի՛ս շա ուհըլլո՛ էուընտա՛ու ըն ուա՛ էֆո՛ ըն դեմո՛նիոն ճեկա՛ս էֆետալճո՛ֆ: Պըհըլլո՛ դե ընտերու-կո՛րըշ ըմմո՛ֆ ըմմա՛տե պեճա՛ֆ ըմ պըդե՛մոն ճե ամո՛ւ էբո՛լ հըմ պեպլա՛սմա ըմ պընո՛ւտե: Պեճե՛ պըդե՛մոն ըմ պըհըլլո՛ ճե տինե՛ու էբո՛լ, տինաճնո՛ւկ դե էուշա՛ճե ըն ուո՛տ: Նիմ նե ընբա՛ամպե աուո՛ նիմ նե ընեսո՛ու: Պեճե՛ պըհըլլո՛ ճե ընբա՛ամպե մեն անո՛կ պե, ընեսո՛ու դե պընո՛ւտե պետ սո՛ուըն ըմմո՛ու: Ընտերե-պըդե՛մոն սո՛տըմ է նայ պեճա՛ֆ ճե իս հե՛էտե էտբե պեկթըբբյո՛ ըն հետ տինե՛ու էբո՛լ:

*Ասում էին մի եղբօր մասին, որ նա զամբիւղներ էր հիւսում եւ բռնակներ փակցնում դրանց: Լսելով իր դրացիին, ով ասում էր, թէ՝ Ի՞նչ անեմ, աշխատանքն արդէն աւարտուած է, իսկ ես բռնակներ չունեմ, որ փակցնեմ զամբիւղներիս,- գնաց, արձակեց բռնակները, որոնք փակցրել էր իր զամբիւղներին եւ բերեց եղբօրը՝ ասելով. «Ահա՛, ես ունեմ, աւելորդ էին մնացել: Վերցրո՛ւ, փակցրո՛ւ զամբիւղներիդ»: Դրանով նա առաջ տարաւ եղբօր գործը՝ եռեւում թողնելով իր սեփականը:*

**ⲁⲩϫⲟⲟⲥ ⲉⲧⲃⲉ ⲟⲩⲁ ⲛ̄ ⲛⲉⲥⲛⲏⲩ ϫⲉ ϣⲁϥⲧⲁⲙⲓⲟ ⲛ̄ ⲛ̄ⲃⲓⲣ ⲛϥ̄ϯ ⲙⲁⲁϫⲉ ⲉⲣⲟⲟⲩ· ⲁϥⲥⲱⲧⲙ̄ ⲇⲉ ⲉ ⲡⲉⲧϩⲓⲧⲟⲩⲱϥ ⲉϥϫⲱ ⲙ̄ⲙⲟⲥ ϫⲉ ⲟⲩ ⲡⲉϯⲛⲁⲁⲁϥ ϫⲉ ⲁ-ⲡϩⲱⲃ ϩⲱⲛ ⲉϩⲟⲩⲛ ⲁⲩⲱ ⲙⲛ̄ⲧⲁⲓ ⲙⲁⲁϫⲉ ⲉ ϯ ⲉ ⲛⲁⲃⲓⲣ· ⲁϥⲃⲱⲕ ⲇⲉ ⲁϥⲃⲱⲗ ⲉⲃⲟⲗ ⲛ̄ ⲙ̄ⲙⲁⲁϫⲉ ⲛ̄ⲧⲁϥⲧⲁⲁⲩ ⲉ**

**ⲚⲈϤⲂⲒⲢ, ⲀϤⲚ̄ⲦⲞⲨ Ⲙ̄ ⲠⲤⲞⲚ ϪⲈ ⲈⲒⲤ ⲚⲀⲒ ⲞⲨⲚ̄ⲦⲀⲒⲤⲞⲨ ⲈⲨⲢ̄-ϨⲞⲨⲞ ⲈⲢⲞⲒ· ϪⲒⲦⲞⲨ ⲦⲀⲀⲨ Ⲉ ⲚⲈⲔⲂⲒⲢ· ⲀⲨⲰ ⲀϤⲦⲢⲈ-ⲠϨⲰⲂ Ⲙ̄ ⲠⲈϤⲤⲞⲚ ⲠⲢⲰϪⲰⲢⲒ ⲀϤⲔⲰ Ⲛ̄ⲤⲰϤ Ⲙ̄ ⲠⲰϤ·**

Աուճո՛ոս էտբե ուա՛ ըն նեսնե՛ու նե շաֆտամյո՛ ըն ընբի՛ռ նըֆտի՛ մա՛անե էոռ՛ու։ Աֆսո՛տըմ դե է պետհիտուո՛ֆ էֆճո՛ ըմմո՛ս նե ու պետինաա՛աֆ նե ա-պըհո՛բ հոն էհո՛ւն աուո՛ մընտա՛յ մա՛անե է տի է նաբի՛ռ։ Աֆբո՛կ դե աֆբոլ էբո՛լ ըն ըմմա՛անե ընտաֆտա՛աու է նեֆբի՛ռ, աֆը՛նտու ըմ պըսո՛ն նե իս նայ ուընտա՛յսու էուըռ-հուո՛ էոո՛յ։ Ճի՛տու տա՛աու է նեկբի՛ռ։ Աուո՛ աֆտըե-պըհո՛բ ըմ պեֆսո՛ն պըոճո՛րի աֆկո՛ ընսո՛ֆ ըմ պոֆ։

*Ապա Պենիամինն ասում էր իր աշակերտներին. «Քայլէ՛ք շիտակ ճանապարհով, հաշուելով մղոնները, եւ չէք վհատուի»։*

*Ապա Հիպերէքիոսն ասում էր. «Վանականի գանձը նրանում է, որ նիւթեղէն իրեր ձեռք չբերի։ Մեկուսացի՛ր եւ կուտակի՛ր քեզ երկնքում եւ անանց հանգիստ կ՚ունենաս յաւիտեանս»։*

*Ապա Պեսարիոնն ասում էր. «Քառասուն գիշեր եմ անցկացրել մամխի թփերի մէջ կանգնած եւ չեմ քնել»։*

*Երանելի կոյս Սառայի մասին ասում էին, որ նա վաթսուն տարի ապրեց գետից վերեւ ընկած վայրում եւ ոչ մի անգամ գետը տեսնելու համար ցած չիջաւ։*

*Ծերունիներն ասում էին. «Եթէ պատանու տեսնես, ով իր սեփական կամքով երկինք է բարձրանում, բռնի՛ր ոտքերից եւ ե՛տ քաշիր, քանզի դա իրեն օգուտ չի բերի»։*

*Մի եղբայր հարցրեց ապա Պոյմէնին. «Ի՞նչ ասել է՝ ոչ մէկին չարիքի համար չարիքով մի՛ հատուցիր»։ Ասաց նրան ապա Պոյմէնը. «Այդ մոլութիւնը չորս տեսակի է՝ առաջինը սրտից է, երկրորդը՝ երեսից, երրորդը՝ լեզուից, չորրորդը՝ քեզ արած չարիքի դիմաց չարիքով հատուցելն է։ Եթէ կարողանաս սիրտդ մաքրագործել, թախիծը երեսիդ չի երեւայ։ Իսկ եթէ երեւացել է՝ զգուշացի՛ր եւ մի՛ թող, որ լեզուիդ տարածուի։ Իսկ եթէ այնու ամենայնիւ բան ասացիր, զսպի՛ր քեզ, որ չարիքը չարիքով չհատուցես»։*

*Մի ծերունու համոզում էին, որ նա իր կարիքների համար դրամ վերցնի։ Նա էլ չէր կամենում վերցնել, քանի որ իր ձեռքի աշխատանքը բաւարարում էր բոլոր կարիքները։ Երբ շարունակեցին համոզել՝ ասելով. «Վերցրո՛ւ, աղքատներին կը տաս», նա պատասխանեց. «Դա կրկնակի ամօթ է՝ քեզ չպատկանողը կարիքաւորներին տաս՝ սին փառք վաստակելու համար»։*

*Ապա Մովսէսը Սքետէում[8] ասում էր. «Եթէ մենք կատարենք մեր նախնիների պատուիրանները, ես կ՚երաշխաւորեմ ձեզ Աստծու առջեւ, որ բարբարոսներն այստեղ չեն գայ, իսկ եթէ չկատարենք՝ այս սուրբ վայրը կ՚աւերուի»։ Մի անգամ, երբ եղբայրները նստած էին ապա Մովսէսի հետ, նա յանկարծ ասաց. «Ահա այսօր բարբարոսները կը գան այստեղ. վե՛ր կացէք եւ փախէ՛ք»։ Նրանք էլ ասացին. «Իսկ դու չե՞ս փախչի»։ Ասաց նրանց. «Այս բոլոր տարիները ես կանխատեսում էի այս օրը, որպէսզի կատարուի Քրիստոսի ասածը, թէ՝ Ովքեր սուր են վերցնում, սրով կ՚ընկնեն»։ Նրանք ասացին. «Ուրեմն մենք էլ չենք փախչի, այլ կը մեռնենք քեզ հետ»։ Եւ նա պատասխանեց. «Իմ գործը չէ, թող ամէն մէկը տեսնի, թէ որտեղ է նա»։ Եօթ եղբայրներ էին նրանք։ Ապա Մովսէսն ասաց. «Ահա բարբարոսները մօտեցան դարպասին»։ Եւ նրանք իրօք ներս խուժեցին եւ մահուան մատնեցին եղածներին։ Մէկը սակայն երկիւղեց եւ խսիրի տակ թաքնուեց։ Եւ ահա տեսաւ երկնքից իջնող եօթ պսակ, որոնք բոլոր եօթի գլուխներին իջան։*

*Մի ծերունու հարցրեցին. «Ինչպէ՞ս չի գայթակղուի նախանձայոյզ եղբայրը՝ տեսնելով, թէ ինչպէս են ոմանք վերադառնում աշխարհ»։ Եւ նա պատասխանեց. «Եթէ նա ուշադրութիւն դարձնի նապաստակների հետեւից ընկնելու սովորութիւն ունեցող շներին, ապա կը տեսնի, թէ ինչպէս նրանցից մէկը՝ նկատելով եւ հետեւելով նապաստակին, վազում է նրա հետեւից, իսկ միւսները՝ տեսնելով նրան, վազում են հետը, ապա ի վերջոյ կանգ են առնում եւ ետ դառնում։ Սակայն նապաստակին առաջինը նկատած շունը՝ թէեւ յոգնած է, շարունակում է վազել եւ հետ դարձածների պէս կանգ չի առնում եւ ուշադրութիւն չի դարձնում փշերին եւ մամխի թփերին, որոնց մէջ է յայտնուել։ Այնպէս էլ նա, ով հետեւում է Տէր Յիսուս Քրիստոսին, անվերջ իր սիրտն ուղղում է դէպի խաչը՝ վեր կանգնելով ամէն մի գայթակղութիւնից, որ կարող է պատահել մեզ, մինչեւ որ հասնի Խաչուածին»։*

*Սքետէում մի ծերունու մասին պատմում էին, որ մի օր նա դուրս եկաւ, որ հունձքի գնայ։ Եղբայրները նոյնպէս գնացին եւ երբ քայլում էին, մի դիակի պատահեցին եւ կանգնեցին նրա գլխին։ Ոմանք եկան եւ բռնեցին նրանց որպէս այդ մարդուն սպանածների։ Մինչ վիճում էին միմեանց հետ եւ սրանք պնդում էին, թէ՝ Դուք էք սպանել,- ծերունին ցուպը ձեռքին անցաւ այդտեղ։ Երբ եղբայրները տեսան նրան, արտասուելով վազեցին մօտը եւ ասացին. «Օգնի՛ր մեզ, հայր մեր», եւ պատմեցին, թէ ինչումն է բանը։ Սա էլ իր ցուպով դիպաւ դիակին եւ ասաց. «Այս եղբայրնե՞րն են քեզ սպանել»։ Նա էլ թէ՝ Ո՛չ։ Ծերունին հարցրեց. «Ի՞նչ է պատահել քեզ»։ Ասաց. «Մենք աւազակներ էինք, վիճեցինք միմեանց հետ, միւսներն ինձ սպանեցին եւ գնացին»։ Եւ բոլորը շատ զարմացած մնացին։*

[8] Սքետէ (յունարէն Σκητη կամ Σκητις, ղպտերէն ϣιητ *շիետ*), տեղանք Եգիպտոսի Նիտրեան անապատում (արաբական անուանումը Վադի ան-Նատրուն)՝ Գահիրէի եւ Ալեքսանդրիայի կէս ճանապարհին, որը վաղ միջնադարից առ այսօր Եգիպտոսի եկեղեցութեան եւ վանականութեան կարեւոր կենտրոններից է։

Կելլիայում[9] մենակ ճգնող մի եղբայր խռովմունքի մէջ էր: Գնաց Փերմես[10] ապա Թէոդորի մօտ եւ պատմեց նրան դրա մասին: Սա էլ ասաց. «Գնա՛ եւ մնա՛ միւսների հետ՝ խոնարհ սրտով հնազանդուելով նրանց»: Եւ նա գնաց եւ մի քանիսի հետ վանքում մնաց, ապա վերադարձաւ, եկաւ ծերունու մօտ եւ ասաց. «Մարդկանց հետ ապրելով էլ հանգիստ չգտայ»: Եւ ծերունին ասաց նրան. «Եթէ ո՛չ մենակ ո՛չ ուրիշների հետ հանգիստ չգտար, ուրեմն ոչ էլ կը գտնես: Ինչո՞ւ հեռացար եւ վանական դարձար, մի՞թէ ոչ նրա համար, որ փորձութիւններին դէմ առ դէմ կանգնես: Ասա՛ ինձ, քանի՞ տարի ես աքեմ կրում»: «Ահա ութ տարի է», ասաց: Եւ ծերունին ասաց. «Արդարեւ, եօթանասուն տարի է, ինչ վանական եմ դարձել եւ մի օր հանգիստ չեմ ունեցել, իսկ դու այս ութ տարո՞ւմ ես ուզում հանգիստ գտնել»:

Սքետացի ապա Էլիասն ասում էր. «Երբ Սքետէ էի փախել, խնդրեցի ապա Հիերաքսին ինձ որդու պէս ընդունել, որ ուսանեմ իր ձեռքի տակ: Եւ նա՝ փորձելով ինձ, ասաց. «Կը հնազանդուե՞ս այն ամէնին, ինչ կ'ասեմ քեզ»: Ասացի. «Այո՛, ի հարկէ»: Եւ նա կրակ վառեց եւ՝ փորձելով ինձ, ասաց. «Եթէ ուզում ես, որ քեզ ինձ մօտ վերցնեմ եւ եթէ հնազանդուելու ես ինձ՝ ձեռքդ այս կրակի վրայ դի՛ր»: Եւ ես ձեռքս կրակի վրայ դրեցի եւ այնքան պահեցի, մինչեւ նրանից հեղուկ դուրս եկաւ: Եթէ նա ձեռքս հետ չքաշէր, ես չէի քաշի: Նա էլ մեզ ցոյց տուեց իր ձեռքի վրայի նշանը[11]»:

Ասում էր ապա Ճիճոյը. «Մի անգամ, երբ ապա Մակարիոսի հետ Սքետէում էի, նրա հետ հունձքի գնացինք: Միասին եօթ եղբայր էինք: Եւ ահա մի այրի մեր հետեւից հասկեր էր հաւաքում եւ անվերջ լալիս: Ծերունին կանչեց դաշտի տիրոջը եւ հարցրեց. «Այս տարեց կինն ինչո՞ւ է լալիս»: Եւ նա ասաց. «Երբ դեռ նրա ամուսինը ողջ էր, մի մարդ նրան իրեր էր ի պահ տուել, սա էլ առանց մի բառ արտաբերելու յանկարծամահ եղաւ, չասաց, թէ որտեղ է պահել դրանք: Ի պահ տուածն էլ իրենը ետ է ուզում: Եւ քանի որ այրին դրանք չի գտնում, այդ մարդն ուզում է նրան զաւակների հետ իրեն ստրուկ վերցնել»: Ասաց ծերունին. «Ասա՛ նրան, թող գայ այն տեղը, որտեղ մենք սովորաբար հանգստանում ենք տապի ժամերին»: Երբ կինը եկաւ, ծերունին հարցրեց. «Ինչո՞ւ ես անընդհատ լալիս»: Եւ նա ասաց. «Ամուսինս՝ մէկից իրեր ի պահ վերցրած մահացաւ եւ մահանալուց առաջ չասաց, թէ որտեղ է պահել դրանք»: Ծերունին ասաց. «Գնա՛նք, ցոյց տո՛ւր մեզ՝ որտե՞ղ ես թաղել նրան»: Եւ վերցնելով եղբայրներին՝ գնաց հետը: Երբ տեղ հասան, ծերունին ասաց այրուն. «Գնա՛ քո տունը»: Եւ նրանք սկսեցին աղօթել: Ծերունին կանչեց հանգուցեալին՝ ասելով. «Այսի՛նչ, որտե՞ղ ես պահել մարդու իրերը»: Եւ նա պատասխանեց. «Իմ տանն են, մահճակալիս ոտքի տակ»: Եւ ծերունին

---

[9] Կելլիա (յունարէն κελλία, «խցեր», ղպտերէն ⲛ̄ⲣⲓ *ընրի*), ճգնաւորների նշանաւոր բնակատեղի Նիտրեան անապատում:

[10] Ճգնաւորների համայնք Կելլիայի մերձակայքում:

[11] Հաւանաբար՝ նման փորձութիւնից ստացուած այրուածքի հետք:

ասաց. «Դէ՛ հանգչի՛ր մինչեւ յարութեան օրը»: Երբ եղբայրները դա տեսան, նրա ոտքերի տակ երեսնիվայր ընկան: Նա էլ ասաց. «Սա իմ պատճառով չեղաւ: Ես ո՞վ եմ, ոչինչ եմ: Այրու եւ որբերի համար Աստուած արեց սա»: Եւ նա գնաց եւ ասաց այրուն, թէ որտեղ են իրերը: Այրին էլ վերցրեց դրանք եւ տուեց տիրոջը եւ ազատուեց՝ ինքն ու իր զաւակները: Իսկ ովքեր լսեցին դրա մասին, Աստծուն փառք տուեցին:

Ոմն եղբայր հարցրեց ապա Մակարիոսին. «Ինչպէ՞ս փրկուեմ»: Ասաց նրան ծերունին. «Եղի՛ր դիակի պէս եւ հաշուի մի՛ առ ո՛չ ուրիշների քամահրանքը, ո՛չ էլ նրանց յարգանքը»:

Մի քանի ծերուններ հարցրեցին ապա Մակարիոսին. «Ինչպէ՞ս պէտք է աղօթել»: Ասաց նրանց ծերունին. «Պէտք չէ շատ խօսքեր արտասանել, այլ պէտք է ձեռքերն առ Աստուած կարկառել եւ ասել՝ Տէ՛ր, ինչպէս ուզում ես եւ ինչպէս հաճոյ է քեզ, այնպէս վարուի՛ր հետս: Իսկ եթէ վշտահար ես, ասա՝ Տէ՛ր, օգնի՛ր ինձ: Եւ նա կը գթայ մեզ իր կարեկցութեան եւ մարդասիրութեան միջոցով»:

Ապա Մակարիոսի մասին պատմում էին, որ այսպէս էր ինքն իրեն որոշել. եթէ եղբայրների հետ հացկերոյթի էր նստում եւ գինի էին մատուցելիս լինում, ապա ամէն մի խմած թասի դիմաց յետոյ մի ամբողջ օր առանց ջրի էր մնում: Եղբայրներն ուժերը զօրացնելու համար նրան գինի էին ածում, ծերունին էլ ուրախութեամբ խմում էր, որ յետոյ ինքն իրեն տանջի: Իմանալով դա՝ նրա աշակերտն ասաց. «Ի սէր Աստծու, նրան գինի մի՛ տուէք, թէ չէ իրեն խցում կը չարչարի»: Եւ երբ եղբայրները դա իմացան, նրան այլեւս գինի չէին տալիս:

Սքետէում մի անգամ տօն էր եւ ծերուններից մէկին մի գաւաթ գինի տուեցին. Նա էլ թէ՝ Հեռու պահէ՛ք ինձանից այս մահը: Տեսնելով դա՝ իր սեղանակիցները նոյնպէս հրաժարուեցին: Միւս անգամ էլ մի տակառ մաճար բերեցին, որպէսզի բոլոր եղբայրներին մի-մի բաժակ տան: Եղբայրներից մէկը փախչելով՝ վեր թռաւ տաղաւարի վրայ, վազեց նրա վրայով. եւ տաղաւարն իսկոյն փուլ եկաւ: Երբ միւսներն աղմուկին վրայ հասան, տեսան գետնի վրայ ընկած եղբօրն ու սկսեցին ամօթանք տալ նրան՝ ասելով. «Ա՛յ դու, դատարկ փառասէր, տեղն էր քեզ»: Ծերուններից մէկն էլ գրկեց նրան եւ ասաց. «Հանգիստ թողէ՛ք որդուս: Իր արածը լաւ էր: Քանի դեռ ողջ է Տէրը, իմ օրօք այս տաղաւարը չի վերաշինուի, որպէսզի ամբողջ աշխարհն իմանայ, որ Սքետէում մի բաժակ գինու պատճառով տաղաւար փուլ եկաւ»:

Մէկը հարցրեց ծերունուն. «Ինչի՞ց է, որ երբ իմ տանն եմ նստած, միտքս դէս ու դէն թափառում է»: Ծերունին էլ պատասխանեց. «Նրանից է, որ արտաքին զգայարաններդ՝ տեսողութիւնդ, լսողութիւնդ, հոտառութիւնդ, խօսունակութիւնդ հիւանդ են: Եթէ դու նրանց գործողութիւնը դէպի մաքրութիւն ուղղես, ներքին զգայարաններդ էլ ան-

դորրի ու առողջութեան մէջ կը լինեն»։ Մէկ ուրիշն էլ հարցրեց. «Ինչի՞ց է, որ երբ իմ տանն եմ նստած, ընկճուած եմ զգում»։ Եւ ծերունին պատասխանեց. «Նրանից է, որ դեռ չես ճանաչել ո՛չ անդորրը, որին յոյսով ձգտում ենք, ո՛չ էլ գալիք պատիժը։ Եթէ հաստատօրէն ճանաչած լինէիր դրանք, եւ եթէ տունդ լցուած լինէր որդերով, այնպէս որ մինչեւ պարանոցդ հասնէին, դու նրանց մէջ կը լինէիր ու կը դիմանայիր նրանց եւ ընկճուած չէիր զգայ»։

Նոյն ինքն ասում էր. «Պահքը մեղքի դէմ պայքարող վանականի սանձն է։ Ով այն դէն է շպրտում՝ տռփոտ յովատակ է»։ Ասում էր նաեւ. «Վանականի հիւծուած մարմինը դուրս է հանում հոգին անդունդի խորքից եւ հիւծում է հաճոյքը պահքի միջոցով»։ Ասում էր նաեւ. «Մաքրաբարոյ վանականին պսակում են երկրի վրայ, երկնքում էլ պսակում են Աստծու ներկայութեամբ»։ Ասում էր նաեւ. «Վանականը, ով չի կարող զսպել իր լեզուն, յատկապէս ցասման պահին, այդպիսինը ոչ մի փորձանք երբեք չի յաղթահարի»։ Ասում էր նաեւ. «Շուրթերիցդ ոչ մի չար խօսք մի՛ արձակիր, քանզի խաղողի վազը փուշ չի ծնում»։ Ասում էր նաեւ. «Աւելի լաւ է միս ուտես եւ գինի խմես, քան չարախօսութեամբ յօշոտես եղբայրներիդ մարմինը»։ Ասում էր նաեւ. «Օձը փսփսաց Եւայի ականջին եւ նրան դրախտից վտարեցին։ Ով չարախօսում է իր եղբօր մասին, նման է այդ օձին, քանզի կործանում է լսողի հոգին եւ իր սեփականն էլ չի փրկում»։

Մի եղբայր զայրոյթով էր լցուած միւսի հանդէպ։ Նա աղօթքի կանգնեց՝ խնդրելով, որ համբերատարութեամբ լցուի իր եղբօր նկատմամբ, եւ որ փորձութիւնն անվնաս կողքովն անցնի։ Եւ իսկոյն տեսաւ, որ իր բերնից ծուխ է դուրս գալիս։ Երբ դա պատահեց, դադարեց զայրանալ։

Սքետէի երէցներից մէկը մի անգամ Ալեքսանդրիայի[12] արքեպիսկոպոսի մօտ գնաց։ Երբ վերադարձաւ, եղբայրները հարցրեցին նրան. «Ի՞նչ կար քաղաքում»։ Նա էլ պատասխանեց. «Յիրաւի, եղբայրք իմ, արքեպիսկոպոսից զատ ես ոչ մի մարդու երեսը չտեսայ»։ Նրանք էլ, երբ լսեցին, այդ խօսքերով զօտեպնդուեցին, որպէսզի հեռու պահեն իրենց աչքի գայթակղութիւններից։

Աբբա Իսահակն ասում էր. «Մեր հայրերը աբբա Պամբոյի հետ պատառոտուած, արմաւենու տերեւներից կարուած շորեր, ցնցոտիներ էին կրում, իսկ դուք այժմ թանկարժէք զգեստներ էք հագնում։ Հեռացէ՛ք այս վայրից, դուք կործանեցիք այն»։ Նա նաեւ ասում էր. «Աբբա Պամբոն ասում էր, թէ վանականն այսպէս պէտք է հագնուի. քի-

---

[12] Ղպտիներն Ալեխսանդրիան «Ռակոտէ» (ⲢⲀⲔⲞⲦⲈ) էին կոչում։ Ի սկզբանէ դա Ալեխսանդրիայի՝ ղպտիներով բնակեցուած թաղի անունն էր, որն այնուհետեւ տարածուեց ամբողջ քաղաքի վրայ։ Մինչեւ արաբների կողմից Եգիպտոսի նուաճումը (մ. թ. 7-րդ դ.) Ալեխսանդրիան բնակեցուած էր առաւելապէս յոյներով եւ յունալեզու մշակոյթի նշանաւոր կենտրոն էր։

*տունը երեք օրով իր խցի առջեւ պէտք է նետի, եւ եթէ ոչ ոք այն վերցնելու արժանի չհամարի, ուրեմն թող կրի այն»։*

*Ապա Կասիանոսն ասում էր. «Ազնուականներից մէկը՝ հրաժարուելով իր ողջ ունեցուածքից, տուեց այն աղքատներին, բայց մի քիչ իր սեփական կարիքների համար թողեց, քանի որ չէր ուզում խոնարհ սրտով ապրել կատարեալ ճգնակեցութեան մէջ։ Եւ ահա այս խօսքն ասաց նրան Բասիլիոսը, ով այժմ սրբերի հետ է. «Ազնուականութիւնը կորցրեցիր, բայց կուսակրօնութիւն չգտար»»։*

*Եղբայրներից մէկը հարցրեց ապա Պաստամոնին. «Ի՞նչ անեմ, ինձ նեղութիւն են պատճառում, քանի որ ես վաճառում եմ իմ ձեռքի գործը»։ Պատասխանեց ծերունին. «Ապա Ծիճոյն ու միւսներն էլ են վաճառում իրենց ձեռքի գործը։ Դա վնասակար չէ։ Երբ վաճառելու լինես, մի անգամ ամբողջ գինը վերցրու, բայց եթէ ուզենաս գնից մի քիչ պակասեցնել՝ որոշողը դու ես։ Այդ ձեւով անդորր կը գտնես»։ Եղբայրն էլ ասաց նրան. «Եթէ ես կարիքի մէջ լինեմ, ուզում ես, որ ձեռքի գործի համար չմտահոգուե՞մ»։ Պատասխանեց ծերունին. «Եթէ դու նոյնիսկ ամէն ինչ ունենաս, ձեռքի գործը մի՛ թող։ Այն, ինչ կարող ես անել՝ արա՛, բայց առանց խռովքի»։*

*Մի եղբայր հարցրեց ապա Ծիճոյին. «Սատանան հին ժամանակուայ մարդկանց է՞լ էր այսպէս տանջում»։ Եւ ապա Ծիճոյը պատասխանեց նրան. «Հիմա աւելի է տանջում, քանզի իր ժամանակը մօտեցել եւ, եւ նա տագնապի մէջ է»։*

*Մէկ ուրիշն ասաց ապա Ծիճոյին. «Նայում եմ ինքս ինձ եւ տեսնում, որ մտքերս Աստծու հետ են»։ Ծերունին պատասխանեց նրան. «Մեծ բան չէ, որ մտքերդ Աստծու հետ պահես։ Աւելի մեծ բան է տեսնելը, որ դու ամէն կենդանի էակից ստոր ես, քանի որ դա տանում է նաեւ մարմնի տքնութեանը։ Սրանք են սրտի խոնարհութեան գործերը»։*

*Մի եղբայր խնդրեց ապա Սարապիոնին. «Ինձ մի խօսք ասա՛»։ Ծերունին էլ պատասխանեց. «Ի՞նչ ասեմ. որ վերցրել ես աղքատների, այրիների եւ որբերի ունեցուածքը եւ դիզել պատուհանի մէ՞ջ»։ Քանի որ տեսել էր գրքերով լի պատուհանը*[13]*։*

*Սրբերի մէջ կար Երուսաղէմում ապրող մէկը, ում Ֆիլագրիոս էին կոչում։ Նա տաժանակիր աշխատում էր, որ վաստակի իր հանապազօրեայ հացը։ Մի անգամ, երբ շուկայում կանգնած վաճառում էր իր ձեռքի գործը, յանկարծ մի քսակ գտաւ, մէջն էլ հազար ոսկի։ Իր տեղում կանգնած մնաց՝ ասելով. «Կորցնողը վստահաբար այստեղ կը*

[13] Ղպտիների մէջ գրքերը շատ արժէքաւոր էին։ Դրանք սովորաբար պահում էին լուսամուտախորշի մէջ ամրացուած դարակների վրայ։

*գայ»։ Եւ ահա նա իրօք՝ արցունք թափելով, եկաւ։ Ծերունին նրան մի կողմ տարաւ եւ տուեց քսակը։ Սա էլ ծերունուն գրկած՝ ուզեց նրան բաժին յատկացնել, բայց ծերունին չուզեց վերցնել։ Այդժամ կորցրածը սկսեց գոչել. «Եկէ՛ք եւ տեսէ՛ք թէ ինչ արեց Աստծու մարդը»։ Ծերունին էլ ծածուկ փախաւ եւ հեռացաւ քաղաքից, որ իր ով լինելը չիմանան։*

*Մի անգամ ապա Մակարիոս Մեծը գնաց ապա Անտոնիոսի մօտ։ Երբ դուռը բախեց, Անտոնիոսը դուրս եկաւ նրան ընդառաջ եւ հարցրեց. «Դու ո՞վ ես»։ Սա էլ, թէ՝ Մակարիոսն եմ։ Անտոնիոսը փակեց դուռը, ներս գնաց՝ Մակարիոսին թողնելով դրսում։ Երբ սակայն տեսաւ նրա համբերութիւնը, ներս թողեց եւ ուրախութեամբ ասաց. «Երկար ժամանակ է, որ ուզում եմ տեսնել քեզ, քանզի լսել եմ քո մասին»։ Եւ հոգատարութեամբ ընդունեց նրան եւ թողեց, որ հանգստանայ, քանի որ շատ յոգնած էր։ Երբ երեկոն մօտեցաւ, ապա Անտոնիոսը մի քանի արմաւենու տերեւ թրջեց (որ հիւսի)։ Ապա Մակարիոսն ասաց նրան. «Թո՛յլ տուր ես էլ ինձ համար թրջեմ»։ Նա էլ ասաց՝ Թրջի՛ր։ Եւ նա տերեւների մի մեծ կապոց հաւաքեց եւ թրջեց այն։ Եւ երեկոյժամից նստած՝ զրուցում էին հոգուն օգտաբեր բաների մասին եւ հիւսում, հիւսուածն էլ պատուհանից իջեցնում էին քարայրի մէջ։ Լուսադէմին երանելի ապա Անտոնիոսն իջաւ եւ՝ տեսնելով, թէ ինչքան է հիւսել ապա Մակարիոսը, զարմացաւ, համբուրեց նրա ձեռքն ու ասաց. «Մեծ զօրութիւն է դուրս եկել այս ձեռքերից»։*

*Մի եղբայր կար վանքում, որ իրեն հանգիստ չէր գտնում եւ յաճախ ցասումով էր լցւում։ Մի անգամ ասաց ինքն իրեն. «Հեռանա՛մ եւ միայնակ ճգնե՛մ։ Երբ ոչ մէկի հետ գործ չունենամ, կրքերս կը հանդարտուեն եւ ես հանգիստ կը գտնեմ»։ Հեռացաւ եւ մի քարանձաւում միայնակ բնակուեց։ Մի օր իր կուժը ջրով լցրեց եւ դրեց գետնին, կուժն էլ իսկոյն շուռ եկաւ եւ գլորուեց։ Զայրացած՝ վերցրեց կուժն ու ջարդուփշուր արեց։ Երբ ուշքի եկաւ, հասկացաւ, որ դեւ է հետը մարտի մտել եւ ասաց. «Ահա միայնակ ճգնում եմ եւ կրկին զայրոյթի մէջ եմ։ Վերադառնա՛մ ուրեմն վանք։ Այս չարիքի հետ հարկ է ամենուրէք պայքարել՝ համբերատար ապաւինելով Աստծու օգնութեանը»։ Եւ ետ դարձաւ իր տեղը։*

*Մի եղբայր կուսակրօն ձեռնադրուեց եւ իսկոյն անապատ հեռացաւ՝ ասելով. «Ես ճգնաւոր եմ»։ Լսելով դա՝ ծերունիները գնացին, վերցրին նրան եւ պարտադրեցին շրջել եղբայրների խցերով՝ ապաշխարելով եւ ասելով. «Ներէ՛ք ինձ, ես ճգնաւոր չեմ, այլ մեղսագործ պատանեակ»։*

*Մի անգամ ապա Մակարիոսը՝ արմաւենու տերեւներ կրելով, քայլում էր ճահճի եզերքով։ Ճանապարհին նրան սատանան պատահեց՝ գերանդին ձեռքին եւ ուզեց սպանել, բայց չկարողացաւ։ Ասաց. «Մեծ բռնութեան եմ ենթարկւում քեզանից, քանզի չեմ կարողանում դէմդ առնել։ Ահա, այն ամէնն ինչ դու ես անում, ես էլ եմ անում։ Դու*

*օրերով ծոմ ես պահում. իսկ ես ընդհանրապէս չեմ ուտում: Դու յաճախ գիշերներ ես հսկում, իսկ ես երբեք չեմ քնում: Մի բանում ես սակայն ինձանից հզօր»: Ապա Մակարիոսը հարցրեց. «Ո՞րն է դա»: Եւ նա ասաց. «Խոնարհութիւնդ: Ես երբեք չեմ կարողանայ խոնարհուել, դրա համար էլ չեմ կարող դէմդ առնել»:*

*Ապա Հորսիէսին ասում էր. «Եթէ հում աղիւսը դնեն գետի մօտ գտնուող հիմքի մէջ, մի օր էլ չի դիմանայ, իսկ թրծուածը քարի պէս կը տոկայ: Այդպէս էլ աշխարհական մտադրութեամբ մարդը, որ Աստծու վախով չի թրծուել, եթէ մեծութեան հասնի՝ կը կործանուի: Քանզի բազմաթիւ են այդպիսիների գայթակղութիւնները, յատկապէս երբ մարդկանց մէջ են: Լաւ է, որ մարդ ճանաչի իր իսկ չափը, որպէսզի փախչի մեծութեան բեռից: Իսկ ովքեր հաստատուն են հաւատքի մէջ, անսասանելի են»:*

*Թէոդոսիոս կայսեր օրօք Կոստանդնուպոլսի արուարձաններում եգիպտացի մի ճգնաւոր կար: Մի օր կայսրն այդ ճանապարհով ընթանալով՝ շքախումբը ետեւում թողեց, մենակ գնաց, բախեց ճգնաւորի դուռը: Եւ թէեւ սա հասկացաւ հիւրի ով լինելը, իբրեւ սովորական զինուորի ընդունեց: Եւ նրանք ներս մտան, աղօթեցին եւ նստեցին: Կայսրն սկսեց հարցուփորձ անել նրան՝ ասելով. «Ի՞նչ են անում մեր հայրերը Եգիպտոսում»: Նա էլ պատասխանեց. «Բոլորն աղօթում են քո փրկութեան համար»: Ապա ասաց նրան, որ մի պատառ հաց ուտի, մի քիչ էլ ձէթ ու աղ տուեց նրան, եւ նա կերաւ: Եւ մի քիչ ջուր տուեց, եւ նա խմեց: Ապա կայսրը հարցրեց. «Գիտե՞ս ես ով եմ»: Եւ ճգնաւորը պատասխանեց. «Քեզ ճանաչողն Աստուածն է»: Այդժամ ասաց. «Ես Թէոդոսիոս կայսրն եմ», եւ ծերունին իսկոյն խոնարհուեց նրա առջեւ: Կայսրն էլ ասաց նրան. «Երանի՜ ձեզ՝ այս աշխարհում անհոգներիդ: Յիրաւի, այն օրուանից, ինչ կայսր եմ ծնուել, հացից ու ջրից այսպէս չէի յագեցել, ինչպէս այսօր, ոչ էլ գիտէի մինչ օրս, թէ ի՜նչ քաղցրահամ են»: Եւ կայսրն սկսեց փառաբանել նրան, ծերունին էլ վեր կացաւ, փախաւ եւ վերադարձաւ Եգիպտոս:*

*Ապա Սարապիոնը մի պոռնիկ տեսաւ եւ ասաց նրան. «Իրիկնաժամին կը գամ քեզ մօտ, պատրաստուի՛ր»: Եւ երբ ներս մտաւ նրա մօտ, ասաց. «Սպասի՛ր մի փոքր, մինչեւ կատարեմ իմ ունեցած պարտականութիւնը»: Նա էլ ասաց՝ Լաւ, հա՛յր իմ: Սարապիոնն էլ սկսեց սաղմոսներ կարդալ՝ սկսելով առաջինից եւ աւարտելով հարիւր յիսուներորդով, եւ ամէն անգամ, ինչ կանգ էր առնում, երեք ծնրադրութիւն էր կատարում: Կինն էլ իր ետեւում կանգնած՝ երկիւղած եւ դողդողալով աղօթում էր: Եւ ծերունին շարունակեց աղօթել կնոջ փրկութեան համար, եւ Աստուած լսեց նրան: Կինն ընկաւ ծերունու ոտքերի տակ՝ լաց լինելով եւ ասելով. «Շնո՛րհ արա, հա՛յր իմ: Տա՛ր ինձ քո իմացած տեղը, որտեղ ես կը փրկուեմ, քանզի Աստուած քեզ դրա համար ինձ մօտ ուղարկեց»: Եւ ծերունին նրան կուսանոց տարաւ եւ ասաց մայրապետին. «Վերցրո՛ւ այս քրոջը, բայց որեւէ բեռ կամ պատուիրան մի՛ դիր վրան, թող անի այն, ինչ ուզում է: Տիրոջ հետ թո՛ղ նրան»: Մի քանի օր անց կինն ասաց. «Ես մեղսագործ արարած եմ, ուզում եմ օրը մէկ*

*անգամ ուտել»: Եւ որոշ ժամանակ անց ասաց. «Ուզում եմ ուտել շաբաթը մէկ անգամ»: Եւ վերջապէս ասաց. «Քանի որ ես շատ մեղքեր եմ գործել, ինձ խցի մէջ փակէք եւ այն, ինչ պէտք է ուտեմ, պատուհանից ինձ տուէք իմ ձեռքի աշխատանքի հետ»: Եւ այդպէս էլ արեցին, եւ նա գոհացրեց Աստծուն եւ այդ տեղում էլ հանգչեց առ Տէր:*

*Երանուհի Սինկլետիկէին հարցրեցին. «Արդեօ՞ք կատարեալ բարիք է ընչազրկութիւնը»: Նա պատասխանեց. «Աւելի քան կատարեալ բարիք է նրանց համար, ովքեր կարող են տանել այն: Ովքեր դիմանում են նրան, մարմնային զրկանքներ են կրում, բայց շնորհ ունեն հոգու մէջ: Ինչպէս կարծրացած շորերն են ծեծում, լուանում եւ մզում ձեռքերի մէջ մինչեւ սպիտակեն, այնպէս էլ տոկուն հոգին կամաւոր աղքատութեամբ աւելի է ամրանում»:*

*Ոմն ծերունի ասում էր. «Եթէ մարդկանց հոգիները յարութիւնից յետոյ Աստծու յայտնութեամբ վախից մեռնելու ունակ լինէին, ողջ աշխարհը կը մեռնէր վախից ու դողից: Ի՞նչ կը լինէր տեսնելը, թէ ինչպէս է երկինքը պատռւում եւ Աստուած ի տես ամբողջ մարդկութեան յայտնւում է ցասման մէջ՝ անհամար հրեշտակազօրի ուղեկցութեամբ: Ուստի պէտք է այնպէս մտածենք, թէ ամէն օր պատասխան ենք տալիս Աստծու առջեւ, քանզի քննելու են մեզ այն ամէնի համար, ինչ արել ենք կեանքում»:*

*Էնատոնի*[14] *ապա Թէոդորոսի եւ ապա Լուկիանոսի մասին ասում էին, որ նրանք յիսուն տարի անցկացրին՝ սեփական մտադրութիւնները մոլորութեան մէջ գցելով եւ ասելով. «Երբ գարունն անցնի, մենք կը հեռանանք այստեղից (վանքից): Եւ երբ ամառն էր գալիս, ասում էին. «Երբ ամառն անցնի, մենք կը հեռանանք այստեղից»: Եւ ահա այդպէս էին անցկացնում ամբողջ ժամանակը մեր հայրերը, ովքեր կը յիշուեն յաւիտեան:*

*Եղբայրներից մէկը մի օր հարցրեց. «Ապա, եթէ յանկարծ մեծ սարսափ պատահի, դու կը վախենա՞ս»: Ծերունին պատասխանեց նրան. «Եթէ երկինքն ու երկիրն իրար հանդիպեն, Թէոդորոսը չի վախենայ»: Պաղատել էր քանի որ (եղբայրը) Աստծուն, որ վերցնի իր վախը:*

*Մի ծերունու մասին պատմում էին, որ նա իր զամբիւղները վաճառելու համար քաղաք էր եկել եւ պատահաբար նստել ոմն ունեւորի տան առջեւ: Ունեւորն էլ մահամերձ էր: Ծերունին նստած տեղից տան վրայ հայեացք նետեց եւ ահա տեսաւ չորս սեւ նժոյգների, որոնց վրայ՝ հրեղէն մականներ ձեռքերին սարսափազդու սեւ ձիաւորներ էին նստած: Եւ երբ տան մօտ հասան, նժոյգները դուրսը թողեցին եւ արագ ներս*

---

[14] Էնատոն (յունարէն ένατου, «իններորդ»), եգիպտական վանք, որն իր անուանումն ստացել է Ալեքսանդրիայից իննը մղոն հեռաւորութեան վրայ գտնուելու համար:

*մտան: Նրանց տեսնելով՝ հիւանդը սարսափեց եւ ճչաց. «Տէ՛ր, օգնի՛ր»: Իր հետեւից ե-կածներն էլ ասացին. «Հիմա՞ ես Աստծուն փնտռում, երբ արեւն առջեւդ մայր է մտնում: Ինչո՞ւ առաջ չէիր փնտռում նրան: Արդ, չկայ քեզ ո՛չ վիճակ, ո՛չ յոյս, ո՛չ աղօթք»:*

*Սուրբ Յովսէփի մասին եթէ մէկն ուզենայ մի բան ասել, ապա կ'ասի, որ նա աշ-խարհի մարդ չէ, քանզի նրան քանի-քանի գայթակղութիւններով են փորձել եւ այն էլ ի՛նչ երկրում: Մի վայրում, որտեղ Աստծու ծառայութեան հետք չկայ անգամ: Բայց իր հայրերի Աստուածն իր հետ էր եւ փրկեց նրան ամէն մի չարչարանքից: Եւ արդ, իր հայ-րերի հետ երկնային արքայութիւնում է: Մենք էլ՝ մեր չափն իմանալով, ջանադիր լի-նե՛նք, քանզի այս ամէնով հանդերձ Աստծու դատաստանից չենք կարողանալու խուսա-փել:*

*Ասում էր երանուհի Սինկլետիկէն, որ աշխարհում զգուշացողներին բանտ չեն նե-տում, եւ նրանք ինքներն իրենց մեղք գործելուց հեռու են պահում: Իսկ մենք մեր մեղ-քերի համար յանձնե՛նք ինքներս մեզ, որպէսզի մեր յօժարակամ վճռով չենթարկուենք գալիք պատժին: Երբ պաս ես պահելու, հիւանդութեան մէջ պատրուակ մի՛ փնտրիր, քանզի նրանք, ովքեր պաս չեն պահում, նոյն պատուհասների են հանդիպում: Սկսել ես բարին անել՝ ետ մի՛ կանգնիր, քանի որ թշնամիդ է խոչընդոտում քեզ, ով ոչնչի է վե-րածուել քո տոկունութեամբ: Նաւարկութեան մեկնողները նախ որսում են համընթաց քամին եւ պարզում իրենց առագաստը: Ապա հանդիպակաց քամին է պատահում նրանց, բայց նաւաստիները վրայ հասած քամու ուժգնութեան պատճառով նաւի բեռը ծովը չեն նետում, այլ մի պահ շունչ են առնում եւ շարունակում նաւարկութիւնը՝ դիմա-կայելով իրենց վրայ ընկած ալիքին: Այդպէս եւ մեր ուղին. եթէ ուժեղ քամի է ելնում մեր դէմ, պարզե՛նք մեր խաչն առագաստի փոխարէն եւ աւարտե՛նք նաւարկութիւնն ա-ռանց վախի:*

*Մեր հայրերից մէկը պատմում էր, որ Կելլիայում քրտնաջան աշխատող մի ծերու-նի կար, ով խիփր էր կրում: Մի օր նա գնաց ապա Ամոնայի մօտ: Տեսնելով նրա հագի խիփրը՝ Ամոնան ասաց. «Սա քեզ ոչ մի օգուտ չի բերի»: Ծերունին էլ հարցրեց նրան. «Ինձ մտահոգող երեք միտք ունեմ՝ կամ անապատում մեկուսանամ կամ օտար երկիր հեռանամ, որտեղ ինձ ոչ ոք չի ճանաչի, կամ էլ փակուեմ խցում, ոչ մէկին չտեսնեմ եւ երկու օրը մէկ ուտեմ»: Ասաց նրան ապա Ամոնան. «Այս երեքից ոչ մէկն էլ քեզ օգուտ չի բերի: Նստի՛ր խցումդ, ամէն օր քիչ-քիչ կե՛ր եւ միշտ մտքումդ պահի՛ր մաքսաւորի խօսքերը[15] եւ այդպէս կը կարողանաս փրկուել»:*

*Կռապաշտ քրմերից մէկը եկաւ Սքետէի ծերունիներից մէկի մօտ: Տեսնելով, թէ սա ինչպէս է ապրում՝ ասաց նրան. «Դուք ձեր Աստծուց ոչինչ չէ՞ք տեսնում»: Ասաց՝ Ո՛չ:*

---

[15] Հաւանաբար՝ «Աստուա՛ծ, ների՛ր ինձ մեղաւորիս» (Ըստ Ղուկասի, 18:13):

*Քուրմն ասաց. «Մենք համեստ ծէսեր ենք կատարում, եւ մեզ խորհուրդներ են բացայայտւում, իսկ դուք այսքան ջանք ու եռանդ էք թափում, գիշերներ էք հսկում, ճգնում, լռութեան դատապարտում ձեզ եւ ասում՝ Մեր սրտերում ոչ մի չար մտադրութիւն չկայ։ Ի՞նչն է ուրեմն բաժանում ձեզ ձեր Աստծուց, որ նա ձեզ իր խորհուրդները չի բացայայտում»։ Եւ երբ մեր հայրերը լսեցին սա, զարմացան եւ ասացին. «Յիրաւի, չար մտադրութիւններն են բաժանում մեզ Աստծուց»։*

*Մի ծերունի ապրում էր վանքում մէկ այլ եղբօր հետ եւ իւրաքանչիւր եկողին հաց էր տալիս։ Երբ եղբայրը դա տեսաւ, ասաց ծերունուն. «Տո՛ւր ինձ իմ բաժին հացը, իսկ քո բաժնի հետ ինչ ուզում ես արա՛»։ Ծերունին բաժանեց հացն իր ու եղբօր միջեւ եւ շարունակեց իր բաժնից ողորմութիւն յատկացնել։ Եւ շատերը վազելով գալիս էին նրա մօտ, որովհետեւ լսել էին, որ նա բոլորին հաց է տալիս։ Աստուած տեսաւ նրա սրտալիութիւնն ու օրհնեց նրա հացը։ Եղբայրն էլ կերաւ իր հացն ու ասաց ծերունուն. «Քանի որ ինձ մօտ մի քիչ հաց է մնացել, վերցրո՛ւ այն քեզ եւ կիսենք եղածը»։ Ծերունին ասաց. «Ինչպէս որ ուզում ես, այնպէս էլ կ՚անեմ»։ Եւ նրանք նորից սկսեցին միասնաբար ապրել։ Եւ երբ ժամանակը եկաւ, կրկին եկան ողորմութեան կարիք ունեցողները։ Եւ մի օր եղբայրը ներս մտաւ եւ տեսաւ, որ շատ քիչ հաց է մնացել։ Եւ մի աղքատ եղբայր էր եկել, եւ ծերունին ասաց. «Հաց տո՛ւր նրան»։ Սա էլ. «Ոչինչ չկայ, ապա»։ Ծերունին ասաց. «Ներս գնա՛ եւ տե՛ս»։ Եղբայրը ներս մտաւ եւ տեսաւ, որ հացի սենեակը լի է հացով։ Եւ երբ տեսաւ դա, վախը պատեց նրան։ Նա հաց տուեց աղքատ եղբօրը եւ լցուեց ծերունու հաւատքով ու առաքինութեամբ եւ փառք տուեց Աստծուն։*

*Մի ծերունի ճգնաւոր գիւղում բնակուող սպասաւոր ունէր։ Մի անգամ պատահեց, որ սա՝ իր սովորութեանը հակառակ, ժամանակին չեկաւ ծերունու մօտ։ Ծերունին էլ ամէն ինչի կարիք ունէր եւ իր ձեռքի գործը, որն իր խցում էր անում, նոյնպէս տուժում էր։ Նեղւում էր, որ ո՛չ աշխատանք ունի, ո՛չ սնունդ։ Ասաց իր աշակերտին. «Կը գնա՞ս կանչես մեզ ծառայողին»։ Նա էլ ասաց. «Ինչպէս կը հրամայես, այնպէս էլ կ՚անեմ»։ Բայց ծերունին չհամարձակուեց ուղարկել աշակերտին։ Եւ երբ շարունակում էին նեղուել սպասաւորի չգալու պատճառով, ծերունին ասաց մի եղբօրը. «Կ՚ուզե՞ս գիւղ գնալ»։ Եւ նա ասաց. «Ինչպէս կը հրամայես, այնպէս էլ կ՚անեմ»։ Եղբայրը սակայն վախենում էր գիւղ գնալ գայթակղութեան պատճառով, բայց որպէսզի անհնազանդ չլինի իր հօրը, վճռեց գնալ։ Ծերունին ասաց նրան. «Գնա՛, ես լիովին վստահում եմ Աստծուն, որ կը պաշտպանի քեզ ամէն մի գայթակղութիւնից»։ Եւ աղօթք արեց եւ ուղարկեց եղբօրը։ Եւ երբ նա գիւղ մտաւ, գնաց այնտեղ, որտեղ սպասաւորն էր բնակւում, եւ իմացաւ, որ նա եւ իր բոլոր տնեցիները՝ բացի իր մի աղջկանից, գիւղից դուրս հոգեհացի են։ Երբ նա դուռը բախեց, աղջիկը ձայն տուեց եւ բացեց նրան։ Եղբայրը հարցրեց հօր մասին, աղջիկն էլ խնդրեց, որ նա մտնի եւ նրան ներս քաշեց։ Եղբայրը հրաժարուեց, բայց աղջիկը բռնեց նրան, ուժով յաղթահարեց նրա դիմադրութիւնը եւ ներս բերեց։ Եւ երբ եղբայրը հասկացաւ, որ անառակութեան համար է իրեն ներս քաշում, հառաչեց եւ*

*գոչեց. «Տէ՛ր, ազատի՛ր ինձ այս պահին յանուն հօրս աղօթքների»: Եւ երբ դա ասաց, անմիջապէս իրեն գետի մօտ գտաւ՝ դէպի վանք տանող ճանապարհի վրայ եւ անբիծ վերադարձուեց իր հօրը:*

*Մի անգամ երանելի ապա Թէոֆիլոս արքեպիսկոպոսը Սքետէ էր գնացել: Եղբայրները հաւաքուեցին եւ ասացին ապա Պամբոյին. «Մի բան ասա պապին[16], որ նա օգուտ քաղի»: Ծերունին էլ ասաց նրանց. «Եթէ նա մեր լռութիւնից օգուտ չքաղի, մեր խօսելուց էլ չի քաղի»:*

*Ապա Պապնուտէի[17] մասին ասում էին, որ նա գինի խմել չէր շտապում: Մի անգամ քայլելով՝ աւազակախմբի վրայ դուրս եկաւ եւ նրանց խմելիս գտաւ: Աւազակապետը նրան ճանաչում էր եւ գիտէր, որ գինի չի խմում: Տեսնելով, որ Պապնուտէն յոգնատանջ է՝ թուրը ձեռքին բաժակը գինով լցրեց եւ ասաց. «Եթէ չխմես՝ կը սպանեմ քեզ»: Նա էլ հասկացաւ, որ աւազակապետն ուզում է Աստծու պատուիրանը կատարած լինել եւ՝ ցանկանալով նրան օգուտ բերել, վերցրեց գինին եւ խմեց: Աւազակապետը զղջաց եւ ասաց. «Ների՛ր ինձ, հա՛յր իմ, որ հարկադրեցի քեզ»: Ասաց նրան ծերունին. «Հաւատում եմ առ Աստուած, որ նա այս գինու բաժակի համար ողորմութիւն ցոյց կը տայ քեզ այս եւ գալիք կեանքում»: Ասաց աւազակապետը. «Առ Աստուած, որ այսուհետեւ ոչ մէկին չարիք չեմ անի»: Եւ այդպէս ծերունին իրենով արեց ամբողջ աւազակախումբը, քանզի մի կողմ դրեց իր կամքը յանուն Աստծու:*

*Ասում էր ապա Պապնուտէն. «Մի անգամ պատահեց, որ ճանապարհով քայլելիս ես մոլորուեցի մարախուղի մէջ եւ մի գիւղում յայտնուեցի: Այնտեղ տեսայ ոմանց, ովքեր անառակութեան էին տրւում: Եւ ես կանգ առայ եւ աղօթեցի Աստծուն, որ ների իմ մեղքերը: Եւ, ահա՛, Աստծու հրեշտակը թուրը ձեռքին երեւաց ինձ եւ ասաց. «Պապնուտէ, իր մերձաւորին դատող ամէն ոք կ՚ընկնի այս թրից: Դու սակայն չդատեցիր, այլ հնազանդուեցիր Աստծու առջեւ, ուստիեւ քո անունը կեանքի գրքի մէջ է գրուելու»»: Մէկ ուրիշն էլ ասել էր. «Մի՛ դատի՛ր անառակներին, նոյնիսկ եթէ ինքդ մաքրաբարոյ ես: Եթէ դատես, ինքդ օրինազանց կը լինես, քանզի նա, ով ասաց՝ Մի՛ շնացէք,- նաեւ ասաց՝ Մի՛ դատէք»:*

*Երանելի Եփրեմը, երբ դեռ փոքր տղայ էր, մի երազ կամ տեսիլք տեսաւ, թէ իբր իր լեզուի միջից խաղողի վազ է բուսնել: Եւ այն աճեց եւ իրենով լցրեց ամբողջ հողը երկնքի տակ, եւ շատ լաւն էին նրա հատապտուղները: Եւ երկնային թռչունները գալիս եւ ճաշակում էին դրանք, եւ ինչ որ ուտում էին խաղողի վազից, այն դրանից աւելին էր ծնում:*

---

[16] Յունարէն πάππας բառից՝ եգիպտական բարձրաստիճան հոգեւորականների պատուաւոր տիտղոս:
[17] Անունը ղպտերէնից թարգմանւում է «Աստծուն պատկանող», յունարէն փոխառուել է «Պափնուտիոս» ձեւով:

*Աբբա Դուլոսը՝ աբբա Բեսարիոնի աշակերտը, պատմում էր․ «Երբ քայլում էինք ծովի եզերքով, ես ծարաւեցի եւ ասացի աբբա Բեսարիոնին․ «Հայր իմ, ես շատ ծարաւ եմ»։ Ծերունին էլ աղօթք արեց եւ ասաց ինձ․ «Խմի՛ր ծովից»։ Եւ ջուրը քաղցրացաւ, եւ ես խմեցի եւ մի քիչ ջուր լցրեցի հետս եղած ամանի մէջ՝ ասելով, թէ կարող է նորից ծարաւեմ։ Ծերունին էլ երբ տեսաւ, ասաց ինձ․ «Ինչո՞ւ ջուր հաւաքեցիր»։ Ասացի․ «Ների՛ր ինձ, իսկ եթէ ուրիշ տեղում էլ ծարաւե՞մ»։ Եւ ծերունին ասաց․ «Այստեղի Աստուածը նաեւ այնտեղի Աստուածն է»»։*

*Մի ազնուատոհմ մարդ՝ հետը շատ դրամ բերելով, հեռու կողմերից Սքետէ եկաւ եւ խնդրեց երէցին, որ դրամը եղբայրներին բաժանի։ Երէցն ասաց․ «Եղբայրները կարիքի մէջ չեն»։ Բայց քանի որ նա պնդում էր, երէցը ոսկէ մետաղադրամներով զամբիւղը դրեց եկեղեցու մուտքի մօտ եւ ասաց եղբայրներին․ «Ով կարիք ունի, թող վերցնի»։ Եւ նրանցից ոչ մէկը չմօտեցաւ, ոմանք նոյնիսկ հայեացք չնետեցին զամբիւղին։ Ասաց երէցը բերողին․ «Աստուած ընդունեց քո ողորմութիւնը։ Գնա՛ եւ բաժանի՛ր այն աղքատներին»։ Սա էլ մեծ դաս քաղեց եւ հեռացաւ։*

*Աբբա Սիմոն Ասորու մասին պատմում էին, որ նա աւելի քան վաթսուն տարի սեան վրայ կանգնած մնաց եւ մարդկային սնունդից ոչինչ չէր ճաշակում, եւ մարդիկ չգիտէին, թէ ինչո՞վ է նա պահպանում իր գոյութիւնը։ Սեան շուրջը հաւաքուածները երկմտում էին՝ մտածելով, որ նա թերեւս ոգի է։ Եւ տասներկու եպիսկոպոսներ հաւաքուեցին եւ աղօթք արեցին առ Աստուած, որ իմանան նրա մասին։ Եւ այնպէս պատահեց, որ երբ իր շուրջը ծոմապահ աղօթում էին, սուրբ աբբա Սիմոնը դիմեց նրանց եւ ասաց․ «Ես էլ միւսների պէս մարդ արարած եմ»։ Բայց եպիսկոպոսները չհաւատացին։ Եւ յանկարծ նրանցից մէկը, ով անարատ էր, իրեն Սիմոնի կողքին սեան վրայ կանգնած գտաւ։ Եւ ահա արեւելքից հրեշտակ յայտնուեց՝ հրեշտակների սնունդը ձեռքին։ Եւ երբ սուրբ աբբա Սիմոնին տուեց, տուեց նաեւ նրա կողքը կանգնածին։ Եւ Սիմոնն ասաց․ «Մինչեւ մահս մարդկանց սնունդից ոչինչ չեմ կարող ճաշակել՝ այս սննդի զօրութեան պատճառով»։ Եւ երբ իմացան եւ համոզուեցին, որ նա Աստծու արարած է, այդժամ բոլորն էլ հաւատացին տասներկու եպիսկոպոսների վկայութեան շնորհիւ։ Եւ աղօթարար սեան մօտ էին մնում, մինչեւ նա չպսակեց իր Քրիստոսահաճոյ սխրանքը։ Եւ նա բոլոր եկողներին յորդորում էր ապաշխարել եւ բարի գործերով դէպի Աստուած շրջուել։ Եւ երբ աւարտեց իր երկրային ուղին, նրա սուրբ մարմնով բազում հրաշքներ կատարուեցին, ինչպէս եւ իր կենդանութեան օրօք, եւ շատերն ապաքինուեցին նրա միջոցով, եւ հեթանոսներից եւ հերձուածողներից շատերն Աստծուն հաւատացին։*

*Մեր հայրերից երկուսը խնդրում էին Տիրոջը, որ պատասխանի, թէ ո՞ր աստիճանի են նրանք հասել։ Եւ ահա ձայն լսեցին, որն ասաց․ «Եգիպտոսի այսինչ գիւղում Եւքարիստ անունով աշխարհական կայ, կնոջն էլ Մարիամ են կոչում։ Դուք նրանց աստի-*

ճանին չէք հասել»։ Երկուսով ճանապարհ ընկան, եկան այդ գիւղը, գտան մարդու տունը եւ հարցրեցին կնոջը․ «Որտե՞ղ է ամուսինդ»։ Ասաց․ «Հովիւ է, ոչխարներ է արածեցնում», եւ ընդունեց նրանց իր տան մէջ։ Երեկոյեան Եւքարիստը ոչխարներով տուն վերադարձաւ եւ ծերունիներին տեսնելով՝ սեղան գցեց եւ ջուր բերեց, որպէսզի լուանայ նրանց ոտքերը։ Ծերունիներն էլ ասացին․ «Մենք ոչինչ չենք ուտի, մինչեւ չասես մեզ, թէ ինչո՞վ ես զբաղւում»։ Եւքարիստը խոնարհ սրտով պատասխանեց․ «Հովիւ եմ, սա էլ կինս է»։ Ծերունիները շարունակեցին հարցափորձ անել, բայց նա ոչինչ չէր ուզում ասել։ Եւ երբ ասացին, թէ՝ Աստուած մեզ քեզ մօտ ուղղորդեց,- վախեցաւ եւ ասաց․ «Այս ոչխարներին մեր ծնողներից ենք ժառանգել, եւ այն եկամուտը, որն Աստուած մեզ նրանցից յատկացնում է, երեք մասի ենք բաժանում․ մէկը աղքատներին ենք տալիս, երկրորդը՝ օտարականներին, երրորդն էլ մենք ենք ծախսում։ Այն օրուանից, ինչ կին եմ վերցրել, մենք չենք պղծուել՝ ոչ ես, ոչ նա, եւ երկուսս էլ կոյս ենք մնում եւ իրարից առանձին քնում։ Եւ մինչեւ օրս դրա մասին ոչ ոք չգիտի»։ Երբ ծերունիները դա լսեցին, շատ զարմացան եւ հեռացան այդ տեղից։

Մի վանական կար, ով աղքատ աշխարհական եղբայր ունէր եւ իր ամէն վաստակածը նրան էր տալիս, բայց սա աւելի էր աղքատանում։ Վանականը գնաց ծերունիներից մէկի մօտ եւ պատմեց դրա մասին։ Ծերունին ասաց․ «Եթէ ինձ լսես, նրան այլեւս ոչինչ չես տայ, այլ կ’ասես․ «Եղբա՛յրս, երբ ունէի, տալիս էի քեզ, հիմա էլ դու ինչ որ աշխատանքովդ վաստակես՝ բե՛ր ինձ»։ Եւ այն, ինչ կը բերի քեզ՝ վերցրո՛ւ եւ տա՛ր այնտեղ, որտեղ գիտես որ օտարական կամ աղքատ ծերունի կայ եւ տո՛ւր նրան եւ խնդրի՛ր, որ աղօթի եղբորդ համար»։ Եւ նա այդպէս էլ արեց․ երբ աշխարհական եղբայրը եկաւ, խօսեց հետն այնպէս, ինչպէս որ ծերունին էր ասել, եւ եղբայրը տխուր հեռացաւ։ Եւ ահա յաջորդ օրը նա բանջարանոցից մի քիչ բանջարեղէն վերցրեց եւ տարաւ եղբօրը, նա էլ դրանք ծերունիներին տուեց եւ խնդրեց, որ աղօթեն իր եղբօր համար։ Ապա ստանալով նրանց օրհնութիւնը՝ տուն վերադարձաւ։ Միւս անգամ եղբայրը եփած բանջարեղէն եւ երեք հաց բերեց, եւ վանականն արեց այնպէս, ինչպէս առաջին անգամ, եւ կրկին օրհնութիւն ստացաւ։ Երրորդ անգամ եղբայրը ձիթապտուղ, գինի եւ ձէթ բերեց, եւ երբ վանականը դա տեսաւ, զարմացաւ, կանչեց աղքատ եղբայրներին եւ յագեցրեց նրանց։ Ապա հարցրեց եղբօրը․ «Հացի կարիք ունե՞ս»։ Եւ նա պատասխանեց․ «Ոչ, եղբա՛յր իմ։ Երբ կարիքի մէջ էի եւ քեզնից ինչ-որ բան էի վերցնում, կարծես կրակ էի բերում տունս, եւ նա աւերում էր այն, իսկ երբ քեզնից ոչինչ չվերցրեցի, ամէն ինչից աւելին ստացայ, եւ Աստուած օրհնեց ինձ»։ Եւ վանականը գնաց ծերունու մօտ եւ պատմեց նրան եղածը։ Եւ սա ասաց․ «Մի՞թէ չգիտես, որ վանականի գործը կրակ է։ Ուր էլ գնայ՝ կ’այրի այդ տեղը։ Եղբօրդ համար օգուտ եղաւ իր սեփական տանջանքից ողորմութիւն յատկացնելը, եւ նա ստացաւ սրբերի աղօթքները եւ դրանով օրհնուած կը լինի»։

*Ապա Դանիէլն ասում էր նաեւ, որ մեր հայր ապա Արսէնիոսը պատմում էր Սքետէում մէկի մասին, ով թէեւ շատ անձնանուէր էր, պարզունակ հաւատքի տէր էր եւ չգիտութեան պատճառով մոլորութեան մէջ էր ընկնում։ Ասում էր, թէ հացը, որը ճաշակում ենք եկեղեցում, էութեամբ Քրիստոսի մարմինը չէ, այլ միայն պատկերը։ Այդ խօսքը երկու ծերունիներ լսեցին եւ իմանալով, որ նա իր կեանքով մեծ է, հասկացան, որ դա ասում է պարզասրտութեամբ, առանց մտածելու։ Եւ եկան նրա մօտ՝ ասելով. «Ապա, մի անհաւատ խօսք ենք լսել, թէ իբր մէկն ասել է, որ մեր ճաշակած հացն իրականում Քրիստոսի մարմինը չէ, այլ նրա պատկերը»։ Ծերունին էլ ասաց. «Ես եմ դա ասել»։ Նրանք էլ սկսեցին համոզել նրան՝ ասելով. «Ոչ, մի՛ յամառիր դրանում, ա՛պա, այլ ինչպէս ընդհանրական եկեղեցին է ասում, հաւատա՛, որ մեր ճաշակած հացն իրօք Քրիստոսի մարմինն է եւ ոչ պատկերը, եւ գինով բաժակն արիւնն արդարեւ եւ ոչ պատկերաւոր։ Եւ ճիշդ այնպէս, ինչպէս սկզբում նա մի կաւագուղձ վերցրեց գետնից եւ մարդ արարեց իր պատկերով, եւ չի կարող ոչ ոք ասել, թէ Աստծու կերպարը չէ դա, թէեւ անհասկանալի անըմբռնելիութիւն է, այնպէս էլ հացը, որի մասին ասաց, թէ՝ Մարմինս է սա,- հաւատում ենք, որ դա ճշմարտապէս Քրիստոսի մարմինն է»։ Ասաց ծերունին. «Եթէ ինձ գործով չապացուցէք, չեմ համաձայնուի»։ Նրանք էլ ասացին. «Աղօթե՛նք այս շաբաթ այդ խորհրդի համար հաւատով, որ Աստուած կը բացայայտի այն մեզ»։ Ծերունին էլ ուրախութեամբ ընդունեց այդ խօսքը եւ աղօթք արեց Աստծուն՝ ասելով. «Տէ՛ր, դու գիտես, որ ես չարամտութեամբ թերահաւատ չեմ, բայց որպէսզի անհաւատութեան եւ անգիտութեան պատճառով չմոլորուեմ՝ բացայայտի՛ր ինձ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս»։ Ծերունիներն էլ գնացին իրենց խցերը, աղօթեցին Աստծուն՝ ասելով. «Յիսուս Քրիստոս, բացայայտի՛ր ծերունուն այս խորհուրդը, որ հաւատայ եւ չվնասի իր ծառայութեանը»։ Եւ Աստուած լսեց բոլորին։ Եւ երբ շաբաթն աւարտին հասաւ, եկան Կիրակի օրը եկեղեցի, երեքով մի տեղ նստեցին՝ ծերունին նրանց մէջտեղը, եւ բացեցին իրենց ներքին աչքերը։ Եւ երբ սուրբ սեղանի վրայ հացը դրեցին, այն այդ երեքին փոքր տղայի տեսքով երեւաց։ Եւ երբ քահանան ձեռքը մեկնեց, որ հացը վերցնի եւ բեկի, ահա հրեշտակ իջաւ երկնքից թուրը ձեռքին, փողոտեց մանուկին եւ արիւնը բաժակի մէջ լցրեց։ Եւ երբ քահանան հացը մաս-մաս արեց, հրեշտակն էլ մանուկին մաս-մաս արեց։ Եւ երբ մօտեցան, որ ընդունեն սուրբ խորհուրդը, ծերունին իրեն արիւնաթաթախ մասունք վերցրեց եւ երբ տեսաւ դա, սարսափեց եւ գոչեց. «Հաւատում եմ, Տէ՛ր, որ հացը մարմինդ է եւ բաժակում արիւնդ»։ Եւ իսկոյն իր ձեռքի մէջ եղած միսը խորհրդի փառքով հացի վերածուեց, եւ նա այն իր բերանը դրեց ու ճաշակեց՝ շնորհակալութիւն յայտնելով Աստծուն։ Ծերունիներն էլ ասացին նրան. «Աստուած գիտի, որ մարդիկ իրենց էութեամբ անկարող են հում միս ուտել, ուստիեւ իր մարմինը հացի եւ արիւնը գինու է գոյափոխում նրանց համար, ովքեր հաւատքով ճաշակում են դրանք»։ Եւ երախտագիտութեամբ լցուեցին առ Աստուած պատահածի համար, եւ որ թոյլ չտուեց ծերունուն վնասել իր ծառայութեանը, եւ երեքով ուրախ իրենց խցերը վերադարձան։*